

ՄԴՅԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՅՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՐԾՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԺԴԿ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Փետրուարի 11-ին եւ 12-ին Անկարայի մէջ տեղի ունեցաւ Թուրքիոյ ընդդիմադիր Ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան (ԺԴԿ) 3-րդ համագումարը, որուն մասնակցելու հրահր ստացած էր նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Կենտրոնական վարչութիւնը:

Ստորեւ՝ ԺԴԿ-ի համագումարին յղուած ՄԴՅԿ Կեդրոնական վարչութեան ուղերձի հայերէն տարբերակը:

Յարգելի համագումարի դիւան, յարգելի Սեփիլ Քեմալ բէյ եւ Սելահիտդին Տեմիրթաշ:

Գոհունակութեամբ ստացանք «Ժողովուրդների Դեմոկրատական Կուսակցութեան» 3-րդ հերթական համագումարի հրաւերը:

Հարգելի ընկերներ եւ բարեկամներ.

ՄԴՅԿ Կենտրոնական վարչութեան եւ աշխարհասփիւռ Յնչակեան շարքի անունով ողջունում ենք «Ժողովուրդների Դեմոկրատական Կուսակցութեան» 3-րդ համագումարը եւ մաղթում բեղուն ու արդիւնատու աշխատանք:

Արդարեւ, թէ՛ Միջին Արեւելքը եւ թէ՛ տարածաշրջանը ընդհանրապէս, շատ վտանգաւոր եւ ճակատագրական հանգրուանում են: Գերտէրութիւնների, շրջանային պետութիւնների ու ծայրայեղական խմբաւորումների քաղաքական, տնտեսական ու հատուածական շահերի բախման հետեւանքով տարածաշրջանը մխրճուած է վերջ չունեցող հակամարտութիւնների ու տագնապների շրջանակի մէջ:

Այսպիսի անօրինաչափ իրավիճակում է տեղի ունենում մեր բարեկամ ԺԴԿ-ի 3-րդ հերթական համագումարը: Մենք համոզուած ենք, որ համագումարի յաջողութիւնը մեծապէս կկարողանայ նպաստել տարածաշրջանում խաղաղութեան եւ ազգերի միջեւ համերաշխութեան հաստատման գործին: Յետեւաբար, եւս մէկ անգամ ողջունում եւ մեր գորակցութիւնը ենք յայտնում ձեզ, ինչպէս նաեւ վերահաստատում մեր կուսակցութիւնների միջեւ բարեկամութեան եւ համագործակցութեան շարունակականութիւնը:

Ընկերական ողջոյններով,
ՍԴՅԿ
Կենտրոնական վարչութիւն

«ՉԵՆՔ Կարող Առյաւէտ Սպասել Թուրքիոյ Պատասխան Քայլերին» Սերժ Սարգսեան



Նախագահ Սերժ Սարգսեան Միւնխի Ապահովութեան վեհաժողովին

Գերմանիա գտնուող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան մասնակցած է Միւնխի Ապահովութեան վեհաժողովին: Խօսք առնելով «Ներս, թէ՛ դուրս. Ռուսիոյ եւ Եւրոպայի միջեւ ինկած երկիրները» խորագիրով քննարկման ընթացքին՝ Սարգսեան հաստատած է, որ Հայ-թրքական արձանագրութիւններու բանակցութիւնը կատարուած էր՝ մեկնելով եղած պայմաններէն: Ան ընդգծած է, որ եթէ Թուրքիան կ'ուզէ սպասել այլ պայմաններու, ապա վաւերացնել արձանագրութիւնները, ան չարաչար կը սխալի, նշելով, որ նոր պայմաններու լոյսին տակ պէտք է բանակցութիւն ընթանայ նոր փաստաթուղթի շուրջ:

Նախագահ Սարգսեան անդրադարձած Արցախի տագնապի լուծման բանակցային հոլովոյթին: «Լեւոնային Ղարաբաղի հիմնահարցի հանգուցալուծմանն ուղղուած ջանքերը կարող են օրինակ ծառայել, թէ ինչպէս Ռուսաստանը, ԵՄ-ը եւ ԱՄՆ-ը կարող են դրականօրէն համագործել իրենց դիրքորոշումները՝ յանուն միջազգային խաղաղութեան ու անվտանգութեան: Մեր ցանկութիւնն է, որ նման ընդհանրութիւններն առաւել յաճախ դրսեւորուեն», - նշած է նախագահ Սերժ Սարգսեան:

Նախագահը խօսած է նաեւ Եւրոպայի անվտանգութեան եւ

Շար.ը էջ 4

Լիբանանի Խորհրդարանի Անդամ Սեպուհ Գալիպքեան «ՄԴՅԿ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԴԻՍԻ ՄԱՍՆԱԿԻ ԻՐ ԲՈՂՈՐ ՆԵՐՈՒԾՈՎ»

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Լիբանանի Շրջանի վարիչ Մարմինի ատենապետ, պետական երեսփոխան ընկ. Սեպուհ Գալիպքեան յայտնեց, որ Մուսթաքալ հոսանքը կը մնայ կուսակցութեան մնայուն դաշնակիցը եւ Հնչակեան կուսակցութիւնը պատրաստ է մղելու խորհրդարանական ընտրութիւնները թէ՛ իր թեկնածուով, թէ՛ իր դաշնակիցներուն օժանդակելով Լիբանանի ամբողջ տարածքին:

Խորհրդարանական ընտրութիւններու նախապատրաստութիւններուն, դաշինքներուն եւ Հնչակեան կուսակցութեան դիրքորոշումներուն ծանօթանալու համար, Լիբանանի մեր քոչը օրկան՝ «Արարատ» կապ հաստատած է ընկ. Սեպուհ Գալիպքեանի հետ, ստանալու համար անհրաժեշտ լուսաբանումները:

Պատասխանելով այն հարցումին, թէ արդեօք ընտրութիւններու խափանումը հաւանական է, ընկ. Գալիպքեան վերահաստատեց,



Պետական երեսփոխան ընկ. Սեպուհ Գալիպքեան

որ ընտրութիւնները անպայմանօրէն պիտի կայանան այնպէս ինչպէս ծրագրուած է՝ 6 Մայիսին, աւելցնելով, որ միայն արտակարգ ու մեծածաւալ զարգացում մը կրնայ վտանգել ընտրութիւնները:

Շար.ը էջ 5

Թուրքիա Կը Ձանայ Կանխել Հայոց Ցեղասպանութեան Ճանաչումը Հոլանտայի Խորհրդարանին Կողմէ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւն հրահրուած է Անկարայի մէջ Հոլանտայի գործերու ժամանակաւոր հաստար-մատար էրիք Ուեսթսթրադէն, որպէսզի իր դժգոհութիւնը յայտնէ Հայոց Ցեղասպանութիւնը ճանչ-նալու վերաբերեալ արդ երկրի խորհրդարանին մէջ քննարկման դրուելիք երկու օրինագիծերուն համար:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Համի Աքսոյը պնդած է, որ այդ օրինագիծերը, որոնք քննարկման պիտի դրուին խորհրդարանին մէջ յառաջիկայ շաբաթներուն ընթացքին, պատրաստուած են Հոլանտայի հայամէտ քաղաքական գործիչներու կողմէ:

Անոր խօսքերով՝ Թուրքիոյ որդեգրած դիրքորոշումը 1915-ի վերաբերեալ կը հիմնուի «պատմական իրականութեան եւ իրաւական չափանիշներու վրայ»:

«1915-ը Թուրքիոյ եւ Թուրք ժողովուրդի համար զգալուն հարց է: Եւ վերջինիս վերանայումը, ինչպէս նաեւ անոր քաղաքականացումը հնարաւոր է, մանաւանդ, որ անիկա կապ չունի պատմութեան եւ իրաւունքի հետ: Կոչ կ'ընենք հոլանտացի քաղաքական գործիչներուն՝ վերանայելու Թուրքիոյ վերաբերեալ իրենց կողմնակալ դիրքորոշումը, ինչպէս նաեւ չքաղաքականացնելու պատմութիւնը», - ըսած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան խօսնակը:

**Արմէն Սարգսեան
Ընդունած է
ՀՀ Նախագահի
Թեկնածու Դառնալու
Առաջարկը**

ՀՀ-ի կողմէ Հանրապետութեան նախագահի թեկնածու առաջարկուած Արմէն Սարգսեան հանդիպում ունենալով Սերժ Սարգսեանի հետ յայտնած է, որ իր հանդիպումները աւարտած է եւ անոնց իբրեւ արդիւնք կայացուցած իր որոշումը՝ ընդունելով Հայաստանի 4-րդ նախագահի թեկնածու դառնալու առաջարկը:

Արմէն Սարգսեան շնորհակալութիւն յայտնած է նախագահ Սերժ Սարգսեանին եւ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան իր հանդէպ ցուցաբերած վստահութեան եւ մեծակնկալիքին համար, նշելով, որ շատ լաւ կը գիտակցի, թէ Հանրապետութեան նախագահի պաշտօնը բացի պատուաւոր ըլլալէն, կ'ընդգրկէ հսկայական պատասխանատուութիւն:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ռուսաստանի Արտաքին Ռեալիտի Վերաբերյալ Խօսքը Սերժ Սարգսյանին

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Ազգային անվտանգության ծառայության պետ Գեորգի Կուտոյանը ֆեյսբուքի 19-ին ընդունել է Ռուսաստանի Արտաքին հետախուզական ծառայության ղեկավար Սերգեյ Նարիշկինին: Անվտանգության եւ ուժային կառույցների մակարդակում հայ-ռուսական հանդիպումները ամենեւին արտառոց կամ արտասովոր չեն, սակայն այդ հարթության վրայ իրաքանչիւր հանդիպում բնականաբար ունենում է իր առանձնատուրը հանգամանքները, կախույթը տուեալ իրավիճակից, որում կայանում է այն:

Այդ տեսանկիւնից, Հայաստանի ԱԱԾ պետի եւ ՌԴ արտաքին հետախուզության ղեկավարի հանդիպումը, յատկապէս դրանում քննարկուած ահաբեկության դէմ պայքարի համատեքստում, ունի մի քանի ուշադրաւ երանգ:

Մասնաւորապէս, Նարիշկինը Երեւանում է անվտանգության հարցերի Միւնխենի վեհաժողովից յետոյ, որի Հայաստանը մասնակցեց նախագահական բարձր մակարդակով, Սերժ Սարգսյանն ունեցաւ ելոյթ, որի ընթացքում հնչեցին մի քանի ուշադրաւ յայտարարութիւններ, բաւական բազմա-

միմաստ տողատակով, որ առնչուած էին Հայաստանի անվտանգութեան խնդիրներին, անվտանգութեան միջազգային համակարգում Հայաստանի դերին, միեւնոյն ժամանակ նաեւ աշխարհաքաղաքական շահերի հատման խաչմերուկում Հայաստանի ոչ միայն մարտահրաւէրներ, այլ հնարաւորութիւն ունենալուն:

Սերժ Սարգսյանը յայտարարեց, թէ այդ հնարաւորութիւնը Երեւանը տեսնում է աշխարհաքաղաքական բեւեռների, այլ կերպ ասած Արեւմուտքի եւ Ռուսաստանի շահերի համադրման միջոցով: Սարգսյանը յայտարարել էր, թէ դրա օրինակ է Արցախի խնդիրն ու Երեւանը ակնկալում է, որ այդ հարցերում էլ հնարաւոր է հասնել այդպիսի համադրման:

Պլանաւորուած էր Նարիշկինի Երեւանեան այցը, թէ այն պայմանաւորուած է եղել Միւնխենի համաժողովին Սերժ Սարգսյանի մասնակցութեամբ, իսկ գուցէ անմիջականօրէն ելոյթով, այդուհանդերձ ուշադրաւ է, որ Միւնխենից յետոյ Երեւանում ընդունում են Նարիշկինին:

Այդ ֆոնին էլ հետաքրքիր է մէկ այլ հանգամանք: Մի քանի շաբաթ առաջ Նարիշկինն այց էր կատարել Ուաշինկթոն, այսպէս

ասած չյայտարարուած այց, եւ դրա մասին գրել էին միայն արեւմտեան լրատուամիջոցները: Ուաշինկթոնում Ռուսաստանի դեսպանատունը յետոյ հաստատել էր, որ եղել է այդպիսի այց: Ընդ որում, ուշագրաւ է այն, որ ՌԴ-ԱՄՆ լարուածութեան պայմաններում, Ռուսաստանի Արտաքին հետախուզութեան ծառայության տնօրէնը Ուաշինկթոն էր այցելել այն օրերին, որք ԱՄՆ պատրաստուած էր հրապարակել այսպէս կոչուած «Կրեմլի ցուցակը», որում ՌԴ մոտ 200 պաշտօնեաներ ու օլիգարխներ են, այդ թւում հայկական ծագումով ու Հայաստանում գործունէութիւն ծաւալով: Այդ ցուցակում է նաեւ հենց ինքը Նարիշկինը:

Ինչու էր նա ցուցակի հրապարակման օրերին այցելել ԱՄՆ: Այցը թերեւս պէտք է ունենար ծանրակշիռ պատճառ: Միեւնոյն ժամանակ, ինչ է «բերում» Նարիշկինն ԱՄՆ-ից Հայաստան եւ արդեօք Երեւան նրա այցը կարող է պայմանաւորուած լինել նաեւ մի քանի շաբաթ առաջ ԱՄՆ-ում ունեցած քննարկումներով:

Այդ տեսանկիւնից խիստ ուշադրաւ է նաեւ այն, որ Նահանգների հետախուզական ծառայութիւնը օրերս հրապարակել էր

միջազգային իրավիճակի մասին զեկոյցը, որտեղ անդրադարձ կար նաեւ Արցախի խնդրին: ԱՄՆ հետախուզութիւնն արձանագրում էր, որ այնտեղ կողմերի հակադիր դիրքորոշումներն ու սպառազինութեան աւելացումը ստեղծում է պայթիւնավտանգ իրավիճակ, ռազմական լայնածաւալ գործողութիւնների վտանգ: Այդ մասով իհարկէ կանխատեսումը կամ զնահատումը արտառոց չէ: Ուշագրաւ էր այլ բան՝ որ ԱՄՆ հետախուզութեան զնահատմամբ, այդ վտանգի դէպքում Ռուսաստանը ստիպուած կը լինի աջակցել Հայաստանին: Այստեղ է առանցքայինը, որի նրբերանգներին անդրադարձել եմ ԱՄՆ հետախուզութեան գլխաւոր Պաքոլին յօդուածում:

Ինչ դեր է ունեցել այդ արձանագրման գործում դրանից կարճ ժամանակ առաջ ՌԴ արտաքին հետախուզութեան ծառայության ղեկավարի Ուաշինկթոն այցը եւ այդ համատեքստում էլ արդեօք Միւնխենի անվտանգութեան համաժողովին Սերժ Սարգսյանի մասնակցութիւնը գործնականում ԱՄՆ հետախուզութեան զեկոյցին արձագանք եւ տրամաբանական շարունակութիւնը չէր: Դրանով փաստացի պէտք է ամբողջանար լայնածաւալ ռազմական գործողութեան սպառնալիքի դէպքում Հայաստանին աջակցելու Մոսկուայի քայլեր թելադրող գործոնները համախումբը, Երեւան բերելով ՌԴ արտաքին հետախուզութեան ծառայութեան պետին՝ շահերի համադրման հետեւից:

Ռուսաստանի արտաքին հետախուզութեան ղեկավարը Երեւանում կը հաստատի, թէ կհերքի ԱՄՆ հետախուզութեան զեկոյցի առանցքային արձանագրումը: «ԼՐԱԳԻՐ»

Ընդդիմադիրները Պատրաստ են Համախմբուել Որ Կանխեն Սերժ Սարգսյանի Վերարտադրութիւնը

ԹԱԳՈՒՅԻ ՅԱԿՈԲԵԱՆ

Ապրիլին ընտրուող ՀՀ վարչապետը կարող է պաշտօնավարել առաջիկայ չորս տարիներին: 2015թ. սահմանադրական փոփոխութիւններին դէմ արտայայտուած, տարիներ շարունակ Սերժ Սարգսյանի եւ ՀՀԿ-ի դէմ պայքարած ընդդիմադիր քաղաքական գործիչներն այս օրերին ուսումնասիրում են այն օրէնսդրական փոփոխութիւնները, որոնցով աւելացում են վարչապետի լիազօրութիւնները, նուազեցում նախագահին: Օրեր առաջ ԱԺ «ԵԼՔ» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանը յայտարարեց, որ ինքը ձեռքերը ծալած չի նստելու եւ հետեւելու Սերժ Սարգսյանի վերարտադրութեանը: Երջանառուում էին լուրեր, որ այդ առումով տարակարծութիւններ կան «ԵԼՔ» դաշինքում, եւ Նիկոլ Փաշինեանին յայտարարութիւնը, մասնաւորապէս, չի պաշտպանում «ԵԼՔի» անդամ Լուսաւոր Հայաստանը: «ԵԼՔ»-ից մէկ այլ ԱԺ պատգամաւոր՝ Մանէ Թանդիլեանը, յայտարարել է, որ Սերժ Սարգսյանի վերարտադրութիւնը թոյլ չտալու հարցում դաշինքում բոլորը համակարծիք են՝ տարածայնութիւններ չկան:

Թէեւ մինչեւ Ապրիլ քիչ ժամանակ է մնացել, եւ թւում է, թէ տարիներ շարունակ Սերժ Սարգսյանի դէմ պայքարած քաղաքական ուժերը պէտք է որոշակի ակտիւութիւն ցուցաբերեն, մտածեն իշխանութեան գծած սցենարը տապալելու մասին, քանզի Ապրիլից յետոյ այդ խնդիրն իրականացնելն աւելի բարդ է լինելու, սակայն այս հարցում էլ անորոշութիւն է: Եւ

ընդդիմադիր դաշտում «հովուերգութիւնը» խախտող միակ քաղաքական ուժն այսօր մնում է «Երկիր ծիրանին» եւ կոյուղաշրի տարայով քաղաքապետարանում ակցիա անող կանայք: Փորձեցինք իմանալ, թէ ինչ քայլեր են պատրաստուած ձեռնարկել արտախորհրդարանական ընդդիմութեան ներկայացուցիչները, որոնք ոչ վաղ անցեալում իրենց կեանքի գերխնդիրն էին հռչակել Սերժ Սարգսյանի իշխանութիւնից ձեռքազատուած Հայաստան տեսնելը:

Նախկին քաղաքապետարկեալ Աշոտ Մանուկեանը արձագանքեց, որ Սերժ Սարգսյանի վերարտադրութեան դէմ պայքարը պէտք է լինէր 2015թ. սահմանադրական փոփոխութիւնների ժամանակ: «Գնացքը զնացել է, այլեւս որեւէ քայլ հնարաւոր չէ անել, որովհետեւ այսօր խորհրդարանն է ընտրելու վարչապետին, իսկ խորհրդարանում նրանք ունեն բաւարար մեծամասնութիւն, որ նոյնիսկ առանց կոալիցիայի կարող են խնդիրը լուծել: Էն ժամանակ, որ մենք պատուում էինք, խօսում էինք, համոզում էինք, ապացուցում էինք, շատ-շատ ուժեր, վայ ընդդիմադիրներ, դա համարում էին կեղծ օրակարգ, իրական խնդիրներից շեղում: Նրանք ժողովրդին ապակողմնորոշելով մեծ վնաս հասցրեցին իրական պայքարին», - ասաց Աշոտ Մանուկեանը:

«Յանուն Հայաստան Պետութեան» ճակատի նախաձեռնող խմբի անդամ, ԱԺ նախկին փոխ-

նախագահ Կարապետ Ռուբինեանն ասաց, որ իրենք դեռ չեն քննարկել այդ հարցը, կը քննարկեն, կ'անեն: Բայց չէ որ կարճ ժամանակ է մնացել մինչեւ խորհրդարանում վարչապետի թեկնածուի առաջադրմանը, Կարապետ Ռուբինեանն արձագանքեց. «Կարճ ժամանակում կը քննարկենք»: Իսկ կա՞ն ռեալ շանսեր ժողովրդին փողոց դուրս բերելու համար, Կարապետ Ռուբինեանն արձագանքեց. «Դա կախուած է մեզնից եւ ժողովրդից»: Կարապետ Ռուբինեանը պատրաստ է համագործակցել ցանկացած ընդդիմադիր ուժի հետ, եթէ խօսքը կոնստրուկտիվ պայքարի մասին է:

Անդրադառնալով Նիկոլ Փաշինեանի յայտարարութեանը՝ մեր զրուցակիցը նշեց, որ դա շատ անորոշ բան է, ինքն էլ ձեռքերը ծալած չի նստելու: «Բայց թէ կոնկրետ ինչ պէտք է արուել, պէտք է քննարկել», - ասաց Կարապետ Ռուբինեանը:

«Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմեն Մարտիրոսեանն էլ Սերժ Սարգսյանի վերարտադրութիւնը կանխելու ճանապարհը տեսնում է համախմբուելու մէջ: «Ժողովուրդը կը համախմբուի միայն այն ժամանակ, երբ համախմբուի ընդդիմադիր դաշտը: Միասնական ջանքերով պէտք է հասնենք իրավիճակի փոփոխութեան: Երբ լինի միասնութիւն, այն ժամանակ էլ կը փոխուի իրավիճակը», - ասաց մեր զրուցակիցը:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մեջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԳՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐՇ ԱՏԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Կառավարման Նոր Համակարգը Ոչ Թե Պառլամենտական Է, Այլ՝ Սուփր-Վարչապետական»։ Էտմոն Մարուքեան

Կառավարման նոր համակարգով այն դերակատարումը, որ պետք է ունենայ խորհրդարանը, պիտի չունենայ, «Կիրակնօրեայ վերլուծական Հրապարակման հետ» հաղորդման ժամանակ նման համոզմունք ցայտնած է «ԵԼՔ» խմբակցութեան պատգամաւոր Էտմոն Մարուքեանը՝ նշելով, որ այն ոչ թէ խորհրդարանական համակարգ է, այլ՝ սուփր-վարչապետական:

Մարուքեանի համոզմամբ, ամէն ինչ կը կեդրոնանայ վարչապետի ձեռքը:

«Գործադիր իշխանութիւնն ամբողջութեամբ ղեկավարուած է վարչապետի կողմից: Մենք ի՞նչ ենք ասում, ասում ենք՝ «այդ իշխանութիւնն ամբողջութեամբ հակադրուած եւ փոխզուտած է, որովհետեւ խորհրդարանը չունի համապատասխան լծակներ եւ մեխանիզմներ»: Դրան է գումարուում խորհրդարանի նաեւ այս վերջին շրջանի եղած դերակատարման թուլացումը, դրան է գումարուում այն նոր օրէնքները, որոնք գալիս են, որոնք, օրինակ, վերաբերում են կառավարութեան նիստերի փակ լինելուն, որոնք վերաբերում են վարչապետին եւ կառավարութեանն առնչելու մարմիններին: Գիտէ՞ք՝ Ոստիկանութիւնը վարչապետին ենթակայ մարմին է այլեւս դառնում, հիմա կառավարութեանն առնչելու մարմին է, ԱԱԾ-ն՝ վարչապետին ենթակայ, վարչապետի վերահսկողական ծառայութիւնը՝ նորից



«ԵԼՔ» խմբակցութեան պատգամաւոր Էտմոն Մարուքեան

վարչապետին ենթակայ, եւ վերջինը՝ Պետական պահպանութեան ծառայութիւնը, որը նոյնպէս վարչապետին ենթակայ ծառայութիւն է»:

Մարուքեանի խօսքով, այնքան ուժ կուտակուած է գործադիր իշխանութեան մօտ, որ նախագահի իրաւունքը հնարաւոր է «պատրանքային իրաւունք» դառնայ:

«Նախագահը հսկելու է օրէնքների սահմանադրականութեան հարցը, եւ եթէ, իր կարծիքով, ինչ-որ օրէնք է ընդունուել, որը սահմանադրական չէ, նա կարող է դիմել Սահմանադրական դատարան եւ չստորագրել, բայց այնքան ուժ է կուտակուած գործադիր իշխանութիւնում, որ դա հնարաւոր է դառնայ պատրանքային իրաւունք», - ըսած է ընդդիմադիր պատգամաւորը:

Արդարադատութեան Նախարար

«Որեւէ Սահմանադրական ճգնաժամի Մասին Խօսիլը Ուղղակի Աւելորդ է»

Որեւէ սահմանադրական ճգնաժամի մասին խօսիլը ուղղակի աւելորդ է, յայտարարած է արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեանը՝ պատասխանելով «Ազատութեան» այն հարցին, թէ արդեօք Հայաստանի մէջ սահմանադրական ճգնաժամ կայ:

Յիշեցնենք, այդ մասին բարձրաձայնած էին շարք մը փաստաբաններ՝ պնդելով, որ Հայաստանի յաջորդ նախագահը պետք է ընտրուի ոչ թէ Ազգային ժողովի, այլ քաղաքացիներու կողմէ՝ ուղիղ ընտրութեամբ: Ան նշած է, որ Սահմանադրութեան այն գլուխները (124-րդ եւ 125-րդ յօդուածները), որոնք կը ներկայացնեն նախագահ ընտրելու նոր կարգը, ուժի մէջ պիտի մտնեն միայն 4-րդ նախագահի պաշտօնավարման օրը, իսկ այդ 4-րդ նախագահը պետք է ընտրուի հին Սահմանադրութեամբ՝ այսինքն ոչ թէ Ազգային ժողովի, այլ ուղիղ՝ համապետական ընտրութեամբ: «Փաստում եմ, որ այս պահի դրութեամբ առկայ է սահմանադրական ճգնաժամ», - ըսած է Կեօզալեանը:

Նախարարը հակադարձած է, ըսելով՝ անգամ ամենավառ երեւակայութեան պարագային կը դժուարանայ նման մեկնաբանութիւն տալ, որ Սահմանադրութեան 125 յօդուածը այս ձեւով կը սահմանափակէ Ազգային ժողովի կողմէ հանրապետութեան նախագահի ընտրութիւն իրականացնելը:

«125 յօդուածն, այո՛, ուժի մէջ է մտնելու Ապրիլի 9-ից, անցումային դրոյթներում նպատակ կար, որպէսզի հանրապետութեան նախա-



Արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեան

գահն ընտրուի Ազգային ժողովի կողմից, բայց ոչ ամբողջովին 125 յօդուածով սահմանուած կարգաւորումներով: Նպատակն այն էր, որ ոչ թէ ուղղակի 125 յօդուածով նախատեսուած մեխանիզմով, այլ փոքր-ինչ այլ, եւ անցումային դրոյթներում նշուած է, որ առաջին ընտրութիւնը տեղի կ'ունենայ այս ժամանակահատուածում՝ 125 յօդուածով սահմանուած կարգով, եւ նշուած է այն առանձնապատկերները, որով պետք է կիրառուի 125 յօդուածը: Այսպիսի հասկացութիւն կայ՝ incorporation by reference, այսինքն՝ յղում եւ կատարում մէկ այլ յօդուածի, մենք կենք ենք տուել 125 յօդուածի փոփոխուած տարբերակին 211 յօդովածով: Սա շատ պարզ է, նայեք էր աչքերով կը դուք կը տեսնէք, որ ամէն ինչ շատ պարզ է, եւ որեւէ սահմանադրական ճգնաժամի մասին խօսելն ուղղակի աւելորդ է», - ըսած է Դաւիթ Յարութիւնեան:

«Բռնապետական Այս Ոճի Կառավարումը Դառնալու Է Տիրապետող»։ Սաքունց

Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանի կողմէ՝ քաղաքապետարանէն ներս լրագրողներու աշխատանքը խոչընդոտելու վերաբերեալ տրուած յանձնարարութիւնը, կառավարութեան նիստերը փակ իրականացնելու վերաբերեալ Արդարադատութեան նախարարի նախաձեռնութեան շարունակութիւնն է: Lragir.am-ի հետ զրոյցի ժամանակ նման դիտարկում ըրած է իրաւապաշտպան Արթուր Սաքունցը:

«Այսինքն՝ ինչ սկզբունք ներկայացնում է վերադասը, նոյն մօտեցումն ընդօրինակում ու իրականացում է իր ենթակաների կողմից», - ըսած է ան:

Ըստ իրաւապաշտպանի՝ բռնապետական այս ոճի կառավարումը պիտի դառնայ տիրապետող գործընթաց:

«Եւ սա ակնյայտ հետընթաց է նոյնիսկ մեր շատ վատ այսօրուայ վիճակի համեմատ: Այս առանձին դրսեւորումները մի ամբողջութիւն են կազմում, ոչ թէ պատահական ինչ-որ դրուագներ են: Այսինքն՝ վերելից ներքեւ ամբողջովին որդեգրում է հանրութեան առջեւ հաշուետուողականութեան բացակայութեան, ընդդիմադիրների նկատմամբ սահմանափակումներ մտցնելու գործընթացը: Եւ սա ռեժիմի



Իրաւապաշտպան Արթուր Սաքունց

կոչացման մասին է վկայում», - ըսած է Սաքունցը:

Նշենք, որ Երեւանի քաղաքապետարանի լրատուական ծառայութեան ղեկավար Արթուր Գէորգեանը խոչընդոտած էր ե՛ւ լրագրողներու, ե՛ւ աւագանիի անդամ Զարուհի Փոսթանճեանի տեղաշարժը քաղաքապետարանէն ներս ու անոնց ոստիկաններու օգնութեամբ դուրս հրաւիրած էր շէնքէն: Իսկ քաղաքապետ Տարօն Մարգարեանը յանձնարարած է վերանայիլ լրագրողներու աշխատանքի կարգը քաղաքապետարանէն ներս, ինչը կ'ենթադրէ, որ խստացումներ կը սպասուին:

Լրագրողական Կազմակերպութիւնները Կը Պահանջեն Թղթակիցներու Աշխատանքը Խոչընդոտելու Դէպքով Քրեական Գործ Յարուցել

Լրագրողական 9 կազմակերպութիւններ համատեղ յայտարարութեամբ հանդէս եկած են Երեւանի քաղաքապետարանէն ներս «Ազատութիւն» ռատիոկայանի եւ «Ա1+» հեռուստաընկերութեան թղթակիցներու մասնագիտական գործունէութիւնը խոչընդոտելու վերաբերեալ: Յայտարարութեան մէջ մասնաւորապէս ըսուած է. - «Երեւանի քաղաքապետարանում խոչընդոտուել է «Ազատութիւն» ռատիոկայանի եւ «Ա1+» հեռուստաընկերութեան թղթակիցներ Ռուզաննա Ստեփանեանի եւ Սուսաննա Պողոսեանի մասնագիտական գործունէութիւնը: Լրագրողները այնտեղ էին աւագանու «Երկիր ծիրանի» խմբակցութեան ղեկավար Զարուհի Փոսթանճեանի հրաւերով, ով մտադրուել էր նրանց ներկայացնել մի շարք խնդիրներ: Մասնաւորապէս այն, որ աւագանու Փետրուարի 13-ի նիստի ընթացքում տեղի ունեցած միջադէպից յետոյ արգելուել է խմբակցութեան ծառայողական մեքենայի մուտքը քաղաքապետարանի կայանատեղի»:

Զաչուի առնելով վերոգրեալը, լրագրողական 9 կազմակերպութիւնները կը պահանջեն քաղաքապետ Տարօն Մարգարեանէն՝ խիստ պատասխանատուութեան ենթարկել քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան պետ Արթուր Գէորգեանը:

Ապրիլեան Պատերազմէն Ետք Հեռացուած Զօրավարը Նոր Պաշտօն Ստացած Է

«Ժողովուրդ» թերթը կը գրէ. «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ 2016թ. ապրիլեան քառօրեայ պատերազմից յետոյ իրեն վերապահուած ոլորտում բացառապէս իսլամադավան ձախողումների համար պաշտօնանկ արուած զինուորականներից ԶՈՒ գլխաւոր շտապի հետախուզութեան վարչութեան նախկին պետ, զօրավար Արշակ Կարապետեանը կրկին վերադարձել է զինուած ուժեր:

Ընդ որում, այս անգամ Կարապետեանին վստահել են բաւական լուրջ պաշտօն, բայց ոչ թէ ՀՀ-ում, այլ ՌԴ-ում: ՊՆ-ից «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ տեղեկացրել են, որ Կարապետեանը նշանակուել է ՌԴ-ում ՀՀ զինանախնդարական ներկայացուցչութեանը կից ռազմական կցորդ:

Դժուար չէ կռահել՝ Կարապետեանն այս բարձր պաշտօնին նշանակուել է մէկ պարզ պատճառով. նա վայելում է Սերժ Սարգս-

եանի հովանաւորութիւնը: Տեսակէտ կայ, որ եթէ նրա փոխարէն լինէր մէկ այլ պաշտօնեայ, ապա առյաւէտ կը մոռանար պետական կառավարման համակարգում յայտնուելու մասին: Մինչդեռ Սերժ Սարգսեանի մտերիմներին ամէն ինչ թոյլատրուած է, ամէն ինչ»:

Զօրավարի վերադարձը կրկին կը սրէ հարցերը՝ կապուած ապրիլեան պատերազմի օրերուն տեղի ունեցած իրադարձութիւններու եւ ռազմա-քաղաքական ղեկավարներու պահանջներին հետ:

Այն ժամանակ բանակի մէջ տեղի ունեցան պաշտօնանկութիւններ, եւ գերիշխող տեսակէտը այն էր, որ այդ մէկը կը կատարուի իրավիճակը պարզապէս լիցքաթափելու, սլաքները իշխանութեանէն շեղելու համար: Ըստ հոսթեան, պաշտօնանկ եղածները այդպէս ալ չպատժուեցան, հակառակ մարդկային ու տարածքային կորուստներուն:

ԼՈՒՐԵՐ

Ֆրանսայի Նախագահն ու Գանատայի Վարչապետը Պիտի Մասնակցին Երեւանի Մէջ Կայանալիք Ֆրանքոֆոնիայի Գագաթնաժողովին



Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մակրոնն եւ Գանատայի վարչապետ Ճասթին Թրուդոն

Երեւանի մէջ Հոկտեմբերին կայանալիք Ֆրանքոֆոնիայի գագաթնաժողովին մասնակիցներու վերջնական ցանկը դեռ պարզ չէ: Այդ մասին կառավարութեան նիստէն ետք լրագրողներու հետ գրոյցի ժամանակ նշած է ՀՀ արտաքին գործոց նախարարի տեղակալ Շաւարշ Քոչարեանը:

«Վերջնական ցանկը դեռեւս յայտնի չէ: Սակայն ֆրանքոֆոն երկու կարեւոր երկրների՝ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մակրոնն եւ Գանատայի վարչապետ Ճասթին Թրուդոնի մասնակցութիւնը յստակ է», - «Արմէնբրես»-ի փոխանցմամբ, ըսած է ՀՀ Արտաքին գործոց փոխնախարարը:

Յունուար 24-ին L'Express

պարբերականին տուած հարցազրույցին Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանը նշած էր, որ գագաթնաժողովի արդիւնքով «մենք կկարողանանք Հայաստանը ներկայացնել ողջ աշխարհին»: «Մենք կանենք ամեն հնարաւորը, որպէսզի այն մեծ յաջողութիւն ունենայ: Հաշուի առէք, որ աշխարհի պետութիւնների գրեթէ կէսը ներկայ կը լինի Երեւանում, հիմնականում պետութիւնների եւ կառավարութիւնների ղեկավարների մակարդակով», - ըսած էր ՀՀ Նախագահը՝ պատասխանելով, հարցին, թէ ինչ նշանակութիւն կունենայ գագաթնաժողովի անցկացումը Հայաստանի համար:

Չենք Կարող Առյաւէտ Սպասել

Շարունակուած էջ 1-էն

համագործակցութեան կազմակերպութեան ծիրին մէջ Հայաստանի ստանձնած եւ բանակցութեան ենթակայ եղած յանձնառութիւններուն մասին՝ ընդգծելով, որ տակաւին նախորդ դարու 70-ական թուականներուն սկիզբ առած Հելսինկիի գործընթացին նպատակը Եւրոպայի մէջ անվտանգութեան եւ համագործակցութեան ամրապնդումն էր՝ ապահովելով ժողովուրդներու համերաշխութիւնը, արժանապատիւ եւ իրաւահավասար համակցութիւնը, որ, Սարգսեանի համաձայն, այսօր ալ կը շարունակէ արդիական մնալ:

«Հէլսինքիի ոգու ազդակող ոտնահարում է Ատրպէյճանի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ: Դա յատկապէս սկնառու է հարեւան երկրում մեկնարկած նախընտրական շրջանում: Նախագահ Ալիեւը ոչ աւել, ոչ պակաս տարած քայլին նկրտումներ է յատարարում Հայաստանի մայրաքաղաք Երեւանի հանդէպ՝ անուանելով այն պատմական ատրպէյճանական տարածք: Զառանցանք է, իհարկէ, բայց Եւրոպայի լուծութեան պայմաններում այդպիսի անհեթեթութիւնները կարող են ունենալ շատ լուրջ հետեւանքներ», - ընդգծած է Սարգսեան:

Հայաստանի նախագահը անդ-

րողարձած է նաեւ հայ-թրքական արձանագրութիւններուն՝ ընդգծելով, որ թուրքիան կը շարունակէ փակ պահել Հայաստանի հետ սահմանը, եւ ժամանակը այստեղ կարծես կանգ առած է: Սերժ Սարգսեան ըսած է, թէ Հայաստանը ամէն ինչ ըրած է իրավիճակը յաղթահարելու համար, սակայն 2009-ին Հայաստանի ու թուրքիոյ միջեւ կնքուած հաշտեցման արձանագրութիւնները այդպէս ալ մնացած են թուղթի վրայ:

«Թուրքիան ոչ միայն չվաւերացրեց դրանք, այլեւ առաջադրեց արձանագրութիւնների հետ որեւէ կապ չունեցող նախապայմաններ: Դա ոչ այլ ինչ էր, քան պատմական հնարաւորութեան տապալում: Արդեօք Ատրպէյճանին է խոչընդոտում թուրքիային Հայաստանի հետ յարաբերութիւններ հաստատելու հարցում, ինչպէս մեզ շատերը փորձում են համոզել: Ո՛չ, հիմնական խոչընդոտը թուրքիայի առաջնորդների քաղաքական կամքի բացակայութիւնն է», - ըսած է Սարգսեանը՝ եզրափակելով - «Մենք չենք կարող առյաւէտ սպասել թուրքիայի պատասխան քայլերին: Արձանագրութիւնները բանակցուել էին՝ ելնելով եղած պայմաններից: Եթէ թուրքիան ցանկանում է սպասել այլ պայմանների, ապա վաւերացնել արձանագրութիւնները, նա չարաչար սխալուում է»:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը Քննարկած է Պոլսոյ Հայոց պատրիարքութեան Իրավիճակը՝



Գերագոյն հոգեւոր խորհուրդի ժողովը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ, նախագահութեամբ Գարեգին երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի, սկսած է Գերագոյն հոգեւոր խորհուրդի ժողովը՝ ընդլայնուած կազմով: Մայր Աթոռի տեղեկատուական համակարգի փոխանցմամբ, օրակարգի մէջ ընդգրկուած են համազգային եւ ներեկեղեցական շարք մը հարցեր:

Մասնաւորաբար, պիտի քննարկուին կոտանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութեան առնչուող խնդիրներ, Հայ Եկեղեցւոյ կառավարման արդիւնաւէտութեան, Հայաստանի առաջին Հանրապետութեան եւ մայրսեան հերոսամարտերու 100-րդ տարեդարձի տօնախմբման, երիտասարդներու մէջ քարոզչական առաքելութեան զօրացման մասին նիւթեր: Քառօրեայ ժողովին պիտի ներկայացուի նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու թեմերու 2017-ի գործունէութեան տեղեկագիրը:

2016 թուականի հոկտեմբերի վերջին Պոլսոյ Հայոց պատրիարքարանին ներս տեղի ունեցած եկեղեցական ընդհանուր ժողովի ժամանակ Հոգեւոր խորհուրդը, անգոր-

ծուակ վիճակի մէջ գտնուող պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մովսէֆեանի ուխտը լուծարուած համարած էր՝ օրակարգ բերելով նոր պատրիարք ընտրելու հարցը:

2017-ի Օգոստոսի սկիզբին, պատրիարքական ընտրութիւնները նախաձեռնող խումբը դիմած էր Պոլսոյ նահանգապետարան՝ առաջարկելով նոր պատրիարք ընտրող պատուիրակներու ընտրութիւնները իրականացնել 10 Դեկտեմբերին, իսկ պատրիարքի ընտրութիւնները՝ 13 Դեկտեմբերին:

Պոլսոյ նահանգապետարանը 5 փետրուարին ի վերջոյ պատասխանած է Պոլսոյ Հայոց նոր պատրիարքի ընտրութեան անցկացման վերաբերեալ դիմումին: Թրքական իշխանութիւնները յայտնած են, որ պատրիարքի ընտրութեան համար անհրաժեշտ պայմաններ չկան եւ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանը կը շարունակէ մնալ պատրիարքական փոխանորդի պաշտօնին, իսկ տեղապահ Գարեգին Պեքճեանի ընտրութեան գործընթացը, ինչպէս նաեւ անոր կայացուցած որոշումները անվաւեր համարուած են:

ԱՄՆ Զգուշացուցած է Հայաստանին՝ Ռուսաստանի Ռազմաթէսիսիական Համալիրի Հետ Համագործակցութեան Հարցով

Հայաստանի կառավարութիւնը միակը չէ, որուն Միացեալ Նահանգները նախազգուշացուցած է հնարաւոր պատժամիջոցներու մասին, եթէ Ռուսաստանի ռազմահետախուզական ոլորտի հետ նշանակալի գործարքներ կնքուին: Այս մասին կը տեղեկացնէ Երեւանի մէջ ԱՄՆ դեսպանատան լրատուական ծառայութիւնը:

«Ազատութիւն»-ը հարցում ուղարկած էր Միացեալ Նահանգներու դեսպանատուն՝ խնդրելով պարզաբանել, թէ արդեօք Հայաստանի կառավարութիւնը միակն է, ուրուն ԱՄՆ-ը յղած է յայտնի ծանուցումը:

«Մենք կը կիրառենք ԱՄՆ Քոնկրեսի կողմէ ԱՄՆ հակառակորդներուն պատժամիջոցներու օգնութեամբ հակադարձելու մասին օրէնսդրութիւնը՝ նպատակ ունենալով ճնշումներու միջոցաւ դրդել Ռուսաստանին՝ փարատելու մեր մտահոգութիւնները Ուքրանիոյ հանդէպ իր կողմէ դրսեւորած թշնամութեան, այլ պետութիւններու ներքին գործերուն միջամտելու եւ մարդու իրաւունքներու

ոտնահարումներու մասով: Օտարերկրեայ պետութիւնները եւ մասնաւոր ընկերութիւնները տեղեկացուած են, որ ցուցակին մէջ ընդգրկուած ռուսական ընկերութիւններուն հետ նշանակալի գործարքները կրնան յայտնուիլ պատժամիջոցներու դաշտին մէջ», - ըսուած է դեսպանատան պատասխանին մէջ:

Միւլենոյն ժամանակ, ամերիկեան դիւանագիտական ներկայացուցչութեան հրաժարած են նշել երկիրներու ու մասնաւոր ընկերութիւններու անուանումները, որոնց յղուած է տուեալ ծանուցումը:

«Մենք նախապէս չենք քննարկեր մեր պատժամիջոցները: Մենք կը յայտարարենք այդ պատժամիջոցները, երբ այդպիսիք կան եւ եթէ այդպիսիք կան: Ընդհանուր առմամբ, եթէ պատժամիջոցներ ըլլան, ապա անոնք հիմնական կ'առնչուին ոչ-ռուսական ընկերութիւններուն, որոնք Ռուսաստանի ռազմահետախուզական ոլորտի հետ նշանակալի գործարքներ ունին», - ըսուած է Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանատան պատասխանին մէջ:

Իսրայելի Քնեսետը Մերժած է Հայոց Ցեղասպանութիւնը Ճանչցող Նախագիծը

Իսրայելի Քնեսետի լիազուգումար նիստին առաջին անգամ քննարկուած է Հայոց ցեղասպանութեան օրը նշելուն վերաբերող նախագիծը: Այն ձայներով 41 դէմ, 28 կողմ եւ ոչ մէկ ձեռնպահ չարաբերակցութեամբ մերժուած է: Նախագիծի հեղինակը «Ե՛էշ Աթիտ» («Կայսապագայ») կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավարն էր:



Ան խօսած է ընդամենը 3 վայրկեան, իր ելոյթին մէջ չի շեղուելով հրեաներու ցեղասպանութիւնը ծրագրած Ատոլֆ Հիթլերի 1939 թուականին արտասանած հետեւեալ խօսքերը՝ «Ո՛վ աչսօր կը խօսի հայերու ցեղասպանութեան մասին»: «Ու քանի որ չենք խօսիր ցեղասպանութիւններու մասին, անոնք կը կրկնուին», - ըսած է «Ե՛էշ Աթիտ»-ի խմբակցութեան ղեկավարը:

Պատգամաւորներէն շատերը հարց կը հնչեցնէին, թէ ինչո՞ւ հիմա կը ներկայացուի այդ նախագիծը, ինչին ի պատասխան՝ «Ե՛էշ Աթիտ»-ի խմբակցութեան ղեկավար Լապիտոն ըսած էր. «Այս հարցը պարզ խնդիր չէ, բանավէճի խնդիր չէ, այն պարզ բարոյական հարց է այն բանի վերաբերեալ, թէ մենք՝ հրեաներս արդեօ՞ք կրնանք ժխտել ցեղասպանութիւնը: Սա ընդդիմութեան եւ իշխանական տեսակէտներու հարց չէ, սա հրեաներու եւ ոչ հրեաներու խղճի հարցն է»:

Իսրայելի ԱԳ փոխնախարար Յիպի Խոտովելին քննարկման ժամանակ ըսած էր «1991 թուականին Հայաստանի անկախութեան հռչակումէն ետք Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան հիմնական նպատակը դարձաւ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը: 2015 թուականին Հայաստանի կառավարութիւնը նպատակ դրած էր, որ ԱՄՆ-ն, ԵՄ-ն եւ Իսրայելը պաշտօնապէս ճանչնան Հայոց ցեղասպանութիւնը: Երեքն ալ չճանչցան»:

Այս խնդիրը քանի մը անգամ քննարկուած է, բայց մեր դիրքորոշումը մնացած է անփոփոխ: Շատ կարեւոր է ճանչնալ հայ ժողովուրդի ողբերգութիւնը, եւ մենք՝ հրեաներս կը հասկնանք այդ, բայց չենք կրնար փոխել մեր արտաքին քաղաքականութիւնը, քանի որ առկայ են դիւանագիտական մեծ խնդիրներ»:

Իր ելոյթին ետք Իսրայելի ԱԳ փոխնախարարը առաջարկած է նախագիծին դէմ քուէարկել: Քննարկման ժամանակ հնչած են փոխադարձ մեղադրանքներ, ինչէն ետք տեղի ունեցած է քուէարկութիւնը: Այս օրերուն Իսրայելը գտնուող՝ հայկական խորհրդարանական պատուիրակութեան անդամները չեն ցանկացած ներկայ գտնուել Քնեսետի մէջ կայացած քննարկումներուն եւ քուէարկութեան:

Յիպի Խոտովելին քննարկման ժամանակ ըսած էր «1991 թուականին Հայաստանի անկախութեան հռչակումէն ետք Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան հիմնական նպատակը դարձաւ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը: 2015 թուականին Հայաստանի կառավարութիւնը նպատակ դրած էր, որ ԱՄՆ-ն, ԵՄ-ն եւ Իսրայելը պաշտօնապէս ճանչնան Հայոց ցեղասպանութիւնը: Երեքն ալ չճանչցան»:

Լիբանանի Խորհրդարանի Անդամ

Շարունակուած էր 1-էն

րուն ընթացքը: Պետական երեսփոխանը հաստատեց, որ լիբանանցիները տարիներէ ի վեր անհամբեր կը սպասեն խորհրդարանական ընտրութիւններուն, նկատի առնելով, որ խորհրդարանի ներկայացուցիչներ ընտրելը ժողովուրդին իրաւունքն է: Ան յոյս յայտնեց, որ ընտրութեան հոլովոյթը լաւապէս կազմակերպուի եւ գործադրուի, յարգելով ժողովրդավար կանոնները: Խօսելով Հնչակեան կուսակցութեան դաշնակիցներուն մասին, ընկ. Գալիաքեան նշեց, որ աւելի քան 25 տարիէ ի վեր կուսակցութեան մնացուն դաշնակիցը կը մնայ Մուսթաքպալ հոսանքը, նախապէս՝ նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրիի, իսկ այժմ՝ վարչապետ Սաատ Հարիրիի գլխաւորութեամբ:

Յիպի Խոտովելին քննարկման ժամանակ ըսած էր «1991 թուականին Հայաստանի անկախութեան հռչակումէն ետք Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան հիմնական նպատակը դարձաւ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը: 2015 թուականին Հայաստանի կառավարութիւնը նպատակ դրած էր, որ ԱՄՆ-ն, ԵՄ-ն եւ Իսրայելը պաշտօնապէս ճանչնան Հայոց ցեղասպանութիւնը: Երեքն ալ չճանչցան»:

Պետական երեսփոխանը չի շեղուելով համաձայնութեանէն ետք տեղի ունեցած բոլոր ընտրութիւններուն առաջին գիծի վրայ մասնակցած է Հնչակեան կուսակցութիւնը, միշտ յաղթանակներ ապահովելով եւ ունենալով իր մնացուն ներկայութիւնը խորհրդարանին մէջ: «Մեր նպատակն է աշխատիլ նոյն ուղղութեամբ եւ պահել մեր ներկայացուցչութիւնը խորհրդարանին մէջ, ինչպէս նաեւ փոխադարձ համագործակցութեամբ օգնել մեր դաշնակիցներուն՝ այն ընտրաշրջաններուն մէջ, ուր կան հայ քուէարկողներ, սակայն չկան հայերու յատկացում աժողովներ», տեղեկացուց ընկ. Սեպուհ Գալիաքեան:

Ան նաեւ անդադարձաւ լիբանանահայ քաղաքական կուսակցութիւններուն միասնականութիւնը պահելու ջանքերուն եւ դիտել

ԱՄՆ-ը Պատասխանած է Երտողանի՝ Օսմանեան Ապտալի Մասին Յայտարարութեան

ԱՄՆ-ի պետական քարտուղարութեան խօսնակ Հեթլը Նոյերթ անդրադարձած է Թուրքիոյ նախագահ Էրտողանի այն յայտարարութեան, ուր վերջինս ըսած էր, թէ ակնյայտ է, որ ԱՄՆ-ի մէջ օսմանեան ապտալ չեն կերած:



Մամլոյ ստուլիսի ժամանակ լրագրողներէն մէկը հետաքրքրուած է, թէ արդեօք պետական քարտուղարութիւնը չանհապառար Թուրքիոյ մէջ հնչող հակամերիկեան յայտարարութիւնները, որոնք երթալով աւելի կոշտ բնոյթ կը ստանան:

Նոյերթ ի պատասխան ըսած է, որ իրենք վարժ են նման յայտարարութիւններու:

«Մենք չենք գայրանար, երբ Թուրքիոյ կամ մէկ այլ երկրի կառավարութեան կողմէ նման յայտարարութիւններ կը հնչեն: Մենք կը տեսնենք այլ կառավարութիւններու ու առաջնորդներու նմանատիպ յայտարարութիւններն ու ընկերային ցանցերու վրայ անոնց գրառումները: Սակայն անոնցմէ որեւէ մէկը հաշուի չենք առնել մեր արտաքին քաղաքականութիւնը ձեւաւորելու ժամանակ», - ըսած է Նոյերթ:

Անդրադառնալով Սուրիոյ քրտաբնակ Աֆրին շրջանին մէջ Թուրքիոյ սանձագերծած ռազմական գործողութիւններուն՝ Նոյերթ ըսած է, որ իրենք այդ շրջանին մէջ գործունէութիւն չեն ծաւալել, սակայն միեւնոյնն է Աֆրինի մէջ ստեղծուած լարուածութիւնը ԱՄՆ-ին անհանգստութիւն կը պատճառէ:

«Կը հասկնանք, որ ՆԱԹՕ-ի մեր դաշնակից Թուրքիան իր անվտանգութեան հետ կապուած Սուրիոյ որոշ շրջաններէն եկող վտանգներու վերաբերեալ հիմ-

նաւոր անհանգստութիւն ունի: Մենք այդ կը հասկնանք, սակայն մենք կ'ուզենք անոնց հետ խօսիլ այնպիսի լուծման մասին, որ աշխատող կ'ըլլայ ոչ միայն Թուրքիոյ, այլ Սուրիոյ ու ԱՄՆ-ի համար», - ըսած է ԱՄՆ-ի պետքարտուղարութեան խօսնակը:

Յիշեցնենք, որ ԱՄՆ գինուած ուժերու գորավար Փոլ Ֆանքը, որ Սուրիոյ տարածքին եւ Իրաքի մէջ գործող ԱՄՆ զլխաւորած դաշինքի գինուած ուժերու հրամանատարն է, կոշտ արձագանգ տուած էր սուրիական Մընպէճի վրայ յարձակելու Թուրքիոյ նախագահի յայտարարութիւններուն:

Ամերիկացի հրամանատարը նշած էր, որ Մընպէճի վրայ թրքական ՁՈւ յարձակման պարագային իրենք համապատասխան հակահարուած պիտի տան Թուրքիոյ:

Անոր ի պատասխան՝ էրտողան ըսած էր. «Մեզ հարուածողներուն պատասխան կու տանք» ըսողները ակնյայտ է, որ երբեք օսմանեան ապտալ չեն կերած: Անոնք, որոնք կը կարծեն, որ իրենց ուզածին պէս կրնան ելուժուտ ընել Թուրքիա, ամէն սանձարձակութիւն իրենց թոյլ տալ ու պատասխան չստանալ, շատ վաղ ապագային պիտի տեսնեն, որ այդ մէկը ամենեւին ալ այդպէս չէ», - ըսած էր էրտողանը:

ԱՄՆ Ազգային Հետախուզութեան Զեկոյց «Ղարաբաղի Լարուածութիւնը 2018-ին Կրնայ Վերածիլ Լայնածաւալ Մարտական Գործողութիւններու»

Միացեալ Նահանգներու Ազգային հետախուզութեան տնօրինութեան գրասենեակը՝ Տէն Քոնոլթսի գլխաւորութեամբ, Փետրուար 13-ին հրատարակած է ԱՄՆ հետախուզութեան գեկոյցը աշխարհի մէջ հնարաւոր սպառնալիքներու առնչութեամբ: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնքրես»-ը, հրատարակուած գեկոյցին մէջ անդրադարձ կատարուած է նաեւ հակամարտութեան Լեռնային Ղարաբաղի, ուր ամերիկեան կողմը 2018 թուականին բռնութեան նոր դրսեւորումներու վտանգ կը տեսնէ:

Մասնաւորապէս կը նշուի, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ լար-

ուածութիւնը կրնայ յանգեցնել Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ լայնածաւալ ռազմական հակամարտութեան, որ կրնայ ներգրաւել Ռուսիան՝ աջակցելու տարածաշրջանին մէջ իր դաշնակիցին:

ԱՄՆ ազգային հետախուզութեան գրասենեակի գնահատումով՝ կողմերուն միջեւ փոխզիջման երթալու ցանկութեան բացակայութիւնը, Ատրպէյճանի կողմէ սպառազինութեան մշտական արդիականացումը, ինչպէս նաեւ Հայաստանի կողմէ նոր ռուսական գինամթերքի ձեռքբերումը 2018 թուականին լայնածաւալ բռնկումներու վտանգ կ'առաջացնեն:

տուաւ, որ կուսակցութիւն մը արդէն իսկ որոշած է մաս կազմել Լիբանանեան Ուժեր կուսակցութեան գլխաւորած ցանկին, ինչ որ անոր իրաւունքն է: «Այնուամենայնիւ, կապերը առկայ են հայ քաղաքական կուսակցութիւններուն հետ եւ աշխատանք կը տարուի, որ ընտրութիւնները որեւէ ժխտական

անդրադարձ չունենան լիբանանահայ գաղութին վրայ: Մեր ցանկութիւնն է, որ կապը շարունակուի եւ միասնականութեան ոգին մնայ տիրապետող, որպէսզի յարաբերութիւնները ամրապնդուին, եթէ ոչ ընտրութիւններէն առաջ, ապա անոնց կայացումէն ետք», եզրափակեց ընկ. Գալիաքեան:

Օտարերկրեայ Լրագրողներու Խումբ մը Այցելած է Արցախ



«Արցախակերտում» ՀԿ-ի կազմակերպմամբ, 10-13 Փետրուարին Արցախ այցելած է օտարերկրեայ լրագրողներու եւ պլուկրներու խումբ մը, որուն մէջ ներգրաւուած եղած են ներկայացուցիչներ Ռուսաստանէն, Լատվիայէն, Հունկարիայէն, Ֆրանսայէն, Ալժերիայէն եւ Իտալիայէն՝ հայ պլուկրներու ուղեկցութեամբ: Այցի նպատակն էր մասնակցիլ զարաբաղեան շարժման 30-ամեակին նուիրուած տօնական միջոցառումներուն, ինչպէս նաեւ՝ ծանօթանալ երկրի պատմութեան, մշակույթին եւ զարգացման ներուժին:

Մարտիրոսեանի, ԱԺ նախագահ Աշոտ Ղուկեանի, ԱԳ նախարար Մասիս Մայիլեանի, Մարդու իրաւունքներու պաշտպան Ռուբէն Մելիքեանի հետ, որու ընթացքին արցախեան ներկայացուցիչները պատասխանած են մասնակիցներու կողմէ բարձրաձայնուած բազմաթիւ հարցերու:

Կազմակերպուած են նաեւ խումբի ճանաչողական այցեր առաջնագիծ, արտադրական որոշ ձեռնարկութիւններ, Ստեփանակերտի Թումօ ստեղծարար թեխնոլոգիաներու կեդրոն, ինչպէս նաեւ՝ որոշ տեսարժան վայրեր:

Փետրուար 13-ին օտարերկրեայ լրագրողները եւ պլուկրները մասնակցած են նաեւ զարաբաղեան շարժման 30-ամեակին նուիրուած միջոցառումներուն:

Այցի շրջածիրէն ներս խումբի անդամները բովանդակալից հանդիպումներ ունեցած են Հայ Առաքելական Եկեղեցոյ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս

Պոլսոյ վճռաբեկ դատարանը «Սանասարեան Խան»-ը հայ համայնքին վերադարձնելու վճիռ կայացուցած է



Գումգաբուի աղբիւրները արձագանգ հանդիսացած են պոլսահայ համայնքին համար շատ դրական իրադարձութեան մը: Այսպէս, Պոլսոյ վճռաբեկ ատենին կողմէ արձակուած դատավճիռի մը հիման վրայ, Սիրքեճիի պատմական Սանասարեան Խանի սեփականութեան իրաւունքը վերադարձուած է Պոլսոյ Պատրիարքական Աթոռին: Ասիկա կրնայ ճակատագրական նշանակութիւն ունենալ պատրիարքութեան յառաջիկայ գործունէութեան տեսակէտէն: Այս մասին կը հաղորդէ Պոլսոյ «Ժամանակը» օրաթերթը:

Իւնները: Սակայն Պոլսոյ 13-րդ հիմնական ատենանք առաջին փուլին արձակած էր ժխտական վճիռ, եւ այդ վճիռի բեկանման պահանջով՝ պատրիարքութիւնը դիմած էր վճռաբեկ ատենան: Իրաւաբան Ալի Էլպէյջոլլուի կողմէ կը ներկայացուէր պատրիարքութիւնը այս դատավարութիւններուն ընթացքին: Երկարատեւ ու հետեւողական աշխատանքէ ետք ապահովուած է այս մեծ յաղթանակը: Այժմ, պիտի կատարուին կալուածաթուղթի եւ համապատասխան արձանագրութիւններու կարգադրութիւնները:

Այս ձեռքբերումը ապահովուած է պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշեանի կողմէ 3 յուլիս 2014-ին կատարուած դատական դիմումին հիման վրայ: Անոր կողմէ բացուած դատը շուրջ երեքուկէս տարուան իրաւական պայքարէ ետք՝ տուած է դրական արդիւնք: Իրականութեան մէջ, այդ պայքարը ունի շատ աւելի վաղեմութիւն: Արդարեւ, Պատրիարքական Աթոռը այս պատմական խանի սեփականութեան իրաւունքը վերստանալու համար դատարան դիմած էր նախապէս, որպէսզի վազըֆներու ընդհանուր տնօրէնութիւնը ընէ անհրաժեշտ կարգադրութեան:

Հարկ է նշել, որ Սանասարեան Խանը պատմականօրէն կտակուած է՝ էրզրումի երբեմնի համանուն վարժարանին մատակարարման նպատակով: Հանրապետական շրջանի սկիզբը, այդ վարժարանի չգոյութեան պատճառով, այդ կալուածը կը տնօրինուէր Պոլսոյ պատրիարքութեան կողմէ, եւ օրուան գահակալը կամ առաջին դէմքը կը համարուէր միակ խնամակալը: Կը նախատեսուի, որ յառաջիկային եւս վերահաստատուի նման դրութիւն մը: Այսինքն՝ այս կալուածին պարագային, պաշտօնապէս առանձին վարչական խորհուրդի մը կարիքը պիտի չըլլայ:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Սասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815



WELCOME HOME & AUTO INSURANCE
Along with all of our other *Trusted Insurance Services*

We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE
(818) 500 9305

Սահակ Եպիսկոպոս Մաշալեան.
«Աթեշեանը եւ Շիրինօղլուն Ապացուցեցին,
որ Թուրքիոյ Սիրելիներն են»



Պոլսոյ հայոց պատրիարքութեան կրօնական ժողովի ատենապետ Սահակ Եպիսկոպոս Մաշալեանը ֆեյսպուքի էջին անդրադարձած է պատրիարքարանի շուրջ ծաւալուող վերջին իրադարձութիւններուն:

Այժմ Պատրիարքի ընտրութիւններու իրականացման անհնարինութիւնը Եպիսկոպոսը բացատրած է անով, որ 1863 թուականի ազգային սահամանդրութեան եւ պետութեան կողմէ 1961 թուականին սահմանուած պատրիարքի ընտրութեան կանոնակարգին մէջ ներառուած են կէտեր, որոնք կ'ենթադրեն եկեղեցւոյ եւ պետութեան համաժամանակեայ գործակցութիւն:

Մաշալեան նշած է, որ քան եկեղեցին ունի այդ օրէնքները մեկնաբանելու իրաւունք, նոյնքան ալ պետութիւնը ունի: Այս պարագային պետութիւնը կիրառելով իր իրաւունքը որոշած է, որ պատրիարքի աթոռը թափուր համարելու համար գործող պատրիարքի հիւանդութիւնը բաւարար պատճառ է: Այնուամենայնիւ, Եպիսկոպոսը նշած է, որ պատրիարք Մեսրոպ Մութաֆեանին հանգստեան կոչելու պատճառը ոչ թէ առողջական խնդիրները եղած են, այլ գիտակցութեան բացարձակ կորուստը, եւ յոյս չայտնած է, որ այդ հարցը մօտ ապագային պիտի կարենան քննարկել պետական պաշտօնեաներուն հետ:

«Այս պահուն պետութեան ցանկութիւնը հնարաւոր չէ անտեսել, քանի որ պատրիարքութիւնը 450 տարի շարունակ գործած է որպէս օսմանեան հաստատութիւն եւ դեռ կը շարունակէ առաջնորդուիլ այդ անդրադարձումներով», - յայտնած է կրօնական ժողովի ատենապետը՝ ընդգծելով, որ ժողովուրդի մեծամասնութիւնն ալ համայնքի կառավարման հարցի վերաբերեալ բաւական գիտելիքներ

չունի:

Մաշալեանը, պետութեան որոշման դէմ չպայքարելու իր դիրքորոշման անդրադառնալով, գրած է. «Կրնայինք ամէն ինչ կրակի տալ, փոշի ու ծուխ բարձրացնել: Բաւականին ալ հետաքրքիր կ'ըլլար: Սակայն այդպէս մեզ միայն աւեր կը բերէինք»: Եպիսկոպոսը նշած է, որ չնայած ինքը եւ Աթեշեանը սկզբունքային հարցերու մէջ տարաձայնութիւններ ունին, բայց թշնամիներ չեն:

Մաշալեանը, որ մէկ տարի առաջ կը պնդէր, որ Աթեշեանի հետ հնարաւոր չէ առաջ շարժիլ, հիմա ալ չի գիտեր՝ կը յաջողի այդ ընել, թէ ոչ, սակայն կը նախընտրէ լաւատես ըլլալ:

«Աթեշեանը եւ Պետրոս Շիրինօղլուն ապացուցեցին, որ պետութեան սիրելիներն են: Մեր համայնքի խնդիրներու նուազագոյնը 70 տոկոսի աղբիւրը դիւանապաշտական խոչընդոտներն են: Անոնք իրենց կապերը օգտագործելով կրնան փակ դուռերը բանալ: Այս ուղղութեամբ մեր համայնքը անոնց պէտք է աջակցի եւ խրախուսէ», - գրած է ան:

Կրօնական ժողովի ատենապետը կը համարէ, որ կատարուածը մեծագոյն անարդարութիւն էր տեղապահ Գարեգին արքեպիսկոպոս Պեքեանի նկատմամբ: Մաշալեանի համոզմամբ՝ Պեքեանը, Յունիս 2017-էն ստանձնելով տեղապահի պաշտօնը, պատրիարքի ընտրութիւնը կազմակերպելու հարցի վերաբերեալ աւելի շատ բան ըրաւ, քան եղած էր վերջին 9 տարիներու ընթացքին եւ կրցաւ ամբողջ գործընթացը աւարտին հասցնել: «Մեր եկեղեցին Դեկտեմբեր 10, 2017-ին ընտրութիւնը իրականացնելու համար ամէն ինչ արժանի կերպով պատրաստած էր: Այսինքն, եթէ բնականոն պայմաններու մէջ ըլլային, պատրիարք շատոնց ընտրած կ'ըլլայինք»:

Չախարովա. Ալիեւի Յայտարարութիւնը Չի
Նպաստեր Լարուածութեան Մեղմացման

Պաշտօնական Մոսկուան «անկեղծօրէն յոյս ունի», որ Լեւնային Ղարաբաղի հակամարտութիւնը կը գտնէ իր լուծումը: Այս մասին յայտարարած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Մարիա Զախարովան:

Երէկ Երեկոյեան ճեպագրոցի ժամանակ պատասխանելով հարցին, թէ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութիւնը ունի՞ ակնկալիքներ, որ գարնան Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի մէջ իրականացուելիք նախագահական ընտրութիւններէն ետք զարաբաղեան հակամարտութիւնը կը լուծուի կամ գոնէ որեւէ լուրջ տեղաշարժ կ'արձանագրուի կարգաւորման գործընթացին մէջ, ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչութեան պաշտօնական ներկայացուցիչը նաեւ ասած է՝ «Ինչպէս գիտէք, մենք անոր սեւեռուն ուշադրութիւն կը չատկացնենք, իսկ ամենապիտանորը՝ աշխուժօրէն կը մասնակցինք քայլ ամէնուն իրականացմանն ուղղուած աշխատանքին, որ նախանշած են կողմերը»:

Մէկ ալ հարցի, թէ Ռուսաստանը, որպէս ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ, ինչպէ՞ս կը գնահատէ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի յայտարարութիւնը, թէ Երեւանը, եւ ոչ միայն, «բուն ատրպէյճանական տարածք է, եւ պատմական հողերը վերադարձնելը Ատրպէյճանի ռազմավարական նպատակն է», Զախարովան, ՌԴ ԱԳՆ պաշտօնական կայքէջի փոխանցմամբ, արձագանգած է. - «Մոսկուայի մէջ, անշուշտ, տեսած են իշխող կուսակցութեան համագումարին Ատրպէյճանի նախագահ



Իլհամ Ալիեւի ելոյթի մասին հաղորդագրութիւնները: Հիանալի զիտենք, որ հարեւան Հայաստանի հետ Ատրպէյճանի յարաբերութիւնները ծայրաստիճան լարուած են: Յիշատակուած յայտարարութիւնը ակնյայտօրէն չի նպաստեր լարուածութեան նուազեցման»:

Պաքուի մէջ տարակուսանք չայտնած են Ալիեւի յայտարարութեան Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ներկայացուցիչի արձագանքսի կապակցութեամբ:

«Հաշուի առնելով Ատրպէյճանի եւ Ռուսաստանի միջեւ ռազմավարական գործընկերային կապերը, ինչպէս նաեւ բարձր մակարդակի երկխօսութիւնը, մենք սխալ կը համարենք նման վերաբերմունքը պետութեան ղեկավարի խօսքերու նկատմամբ», - APA լրատուական գործակալութեան փոխանցմամբ՝ երէկ ըսած է Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութեան մամուլի ծառայութեան ղեկավար Հիքմետ Հաճիբեւը, պնդելով, թէ Իլհամ Ալիեւի քաղաքականութիւնը «կը ծառայէ տարածաշրջանային խաղաղութեան եւ անվտանգութեան ապահովման, տարածաշրջանային համագործակցութեան ամրապնդման»:

GARNI

Nourish your hair with natural products

2 Month Supply 2.7 fl. oz. / 80 ml

3.7 fl. oz. / 80 ml

www.GarniUSA.com
 Pasadena, CA 91102, USA

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ
 ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՁ (200 ՅՈԳԻ ԳԱՍԱՐ)
 ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԳԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՍՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
 ԳԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՀԱՅԱՍՏԱՆ «ԱՊՍԱՍԲՈՒԹԻՒՆ»ՆԵՐՈՒ ԱՌԱՍՊԵԼԸ

ԱԼԵՏԻՍ ՈԱՉՄԻԿ

Ինչպես ծանօթ է, այս տարի նախատեսված է մեծաշուք հանդիսություններով տոնախմբել Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրութեան 100-ամեակը: Պետական աւագանիին մինչև եկեղեցուց նուիրապետական աթոռներ տեսնագիրս լծուած են այս աշխատանքներուն. գոնէ այդպէս կը թուի ԸԼԼԿԼ:

Իւրաքանչիւր ոք ունի իր դիտանկիւնը այս առնչութեամբ. ոմանք կ'ըսեն թէ պէտք է դասեր քաղել երկուքուկէս տարուան հանրապետութեան պատմութենէն. ուրիշներ՝ վերագնահատել պատմութիւնը եւ վերաբեւոյնել ցարդ անտեսուած դէմքերը. շատեր փառաբանել իրենց կուսակցութիւնը՝ պատեհ պահը նկատելով նսեմացնելու ուրիշները: Այս բոլոր ենթակայական մօտեցումներէն անդին, կը կարծենք թէ աւելի կարեւոր է ժամանակաշրջանին առարկայական գնահատումը՝ իրերը կոչելով իրենց անուններով:

Պատմութիւնը իր ամբողջութեամբ կարելի չէ ճշգրիտ ընկալել ընդհանուր եղելութիւններէն անջատ: Պատմութիւնը ընդհանուր շղթայի մը իրարայաջորդ օղակներն են՝ իրարմէ անքակտելի. սերտօրէն առնչակից: Ուրեմն, առաջին հանրապետութեան ծնունդէն առաջ եւ ետք արձանագրուած կտրուկ իրա դարձութիւնները անհրաժեշտօրէն պէտք է մնան լուսարձակի տակ:

Նաեւ, գանոնք վերջիշէլ ըստ պատշաճի, քննել՝ ինչպէս որ անկ է:

Թէ ինչպէս եւ ինչո՞ւ 1918 Փետրուարէն Մայիս մենք կորսնցուցինք Արեւմտահայաստանի մեծագոյն մասը (ականջը խօսի Զօրավար Անդրանիկի): Մեծ Եղեռնի համարժէք կորուստ մըն էր այս՝ երբ Երզնկայէն մինչեւ Սարգարապատ թրքական զօրքը խոցացաւ գրեթէ անարգել եւ յետայդու հայազրկուեցաւ մեր կենսատարածքին մեծ տոկոսը: Թէ ինչպէս եւ ինչո՞ւ մայիսեան հերոսամարտերը մղուեցան որպէս վերջին ճիգեր հայու լինելութեան: Թէ Սարգարապատի համազգային դիւցազնա-

Մանուկեան վարժարանը Հայկական վարժարան է, իր նկարագրով եւ հոլութեամբ: Այս վարժարանին նպատակն է աշակերտներուն հայեցի դաստիարակութիւն ջամբել եւ իրենց մէջ ազգային նկարագիրը զօրացնել: Աշակերտներուն այսօրուան ներկայացնելիքը լաւագոյն վկան է սոցի հաստատումին, եզրակացուց տիկ. Գարայեան: Ապա բեմ հրաւիրեց վարժարանիս Հայկական Բաժանմունքի վարիչ՝ օրդ. Լորա Գուլյումճեանը, որպէսզի վարէ օրուան հաղորդավարութիւնը:

Օրդ. Լորա իր կարգին վեր առաւ վարժարանիս տարած հայկական առաքելութիւնը, յատկա-

սանեց յանձնախումբի ատենապետուհին՝ Տիկ. Ալիս Գաւաճեան, որ բոլոր ներկաներուն սրտի թարգմանը ըլլալով շնորհակալութիւն յայտնեց ՀԲԸՄ-ի վաչէ եւ Թամար Մանուկեան վարժարանի տնօրէնութեան, երգի ու պարի ուսուցիչներուն՝ տիար Պարթեւ Կիլիւմեանին, օրդ. Էլմիրա Սիմոնեանին եւ տիկ. Թագուհի Պէգաթեանին, եւ յատկապէս աշակերտներուն՝ իրենց սքանչելի կատարումին համար:

Հաւաքական լուսապատկեր առնելէ ետք, աշակերտները հոգեթով զգացումներով լեցուած վերադարձան վարժարան:

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐժԱՐԱՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԳԱԿԱՏԱՄԱՐՏ



ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Տանհինգ դարեր առաջ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան կռիւն էր, որ մղեց հայ աւագանին ընդէմ պարսիկ բռնակալ Յազկերտի դէմ, ողջ մարդկութեան պատգամելով ազատ կամքի իրաւունքի մասին.....միօրեայ այդ կռիւը այնքան այժմէական էր, որ ցարդ առկայ է ամէն հայու առօրեայ կեանքին մէջ, հայ ժողովուրդի իրականութեան մէջ, ամենուրեք՝ հայրենիք թէ սփիւռք:

Այո, տանհինգ դարեր ետք, տակաւին մարդկութիւնը կը պայքարի փաստելու համար մարդկային կամքի ազատ ինքնորոշման իրաւունքը, առաւել օտարի լուծը մերժելու յանդգնութիւնը:

Այս սկզբունքային հարցը կարենալ պարտադրելու համար՝ հաւատք էր պէտք, հաւատք՝ ինքնորոշման իրաւունքի, հաւատք՝ ազատ կամք ունենանալու, հաւատք՝ հասարակութեան գաղափարին եւ վերջապէս կամք՝ չենթարկուելու օտար

րի գնահատուածներին.....Վարդան եւ իր քաջ ընկերները առաջնորդուեցան այդ հաւատքով եւ մեզի տուին նոյն պատգամը որ կ'առաջնորդէ մեզ Հայկէն մինչեւ Սարտարապատ եւ Արցախ, եւ այս չէ արդեօք այն կենսական դասը, որ պէտք է փոխանցենք սերունդներուն գալիք:

Այս սկզբունքէն մեկնած Հայ Քոյրերու Վարժարանը ամէն տարի մեծ շուքով ու խանդավառութեամբ կը տօնէ Վարդանանց քաջերու յիշատակը, փոխանցելով աշակերտներուն Ազատութեան գաղափարն ու զայն իրագործելու կամքի գորութիւնը:-

Այս տարի եւս, Չորեքշաբթի 7 փետրուարին Հայ քոյրերու Վարժարանի Դանիէլեան սրահը առաւօտեան 9ին ունեցաւ աշակերտական Սուրբ Պատարագ, Վարդանանց նահատակներու յիշատակին, Պատարագիչ վարդապետն էր Կլենտէյլի Ս.Գրիգոր Լուսաւորիչ Կաթողիկէ աթոռանիստ եկեղեցւոյ ժո-

Շար.ը էջ 19

Հովանաորութեամբ
Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի
Առաջնորդ, Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմին

Կազմակերպութեամբ
Թեքեան Մշակութային Միութեան
Լոս Անճըլըսի Մասնաճիւղին

ՅՈՒՐԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Նուիրուած արձակագիր
ՍԱՐԳԻՍ ՎԱՅԱԳՆԻ
Ծննդեան 90-ամեակին
եւ
Ներկայացում
Հանր՝նը Սիրուն վեպին

Ելոյթ կ'ունենան
ՎԱՉԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ
Սարգիս Վահագնի 90-ամեայ վաստակը
ԼԻԼԻԹ ՔԷՅԵԱՆ
Հանր՝նը Սիրուն վեպը

Խօսք պիտի առնէ
ԹԱՄԱՐԱ ՅՈՎԱՆՆԵՍԵԱՆ

Հանդիսավար
ԲԱՐՍԵՂ ԳԱՐԹԱԼԵԱՆ

ՈՒՐԲԱԹ, ՄԱՐՏ 9, 2018 երեկոյեան 7:30-ին
ԿԼԵՆՏԵՅԼԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄՐԱՀ
222 E. Harvard Street - Glendale
Validated parking at Marketplace parking structure - Harvard & Maryland

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ / ՄՈՒՏՔԸ ԱՋԱՏ

ԹՈՒՐԹԻՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՒԻ ԾԳՆԱԺԱՄ «ՄԻ՛ ԿՐԱՏԻՔ ԱՄԵՆ ԻՆՉ ԼԱԻ Կ՛ԸԼԼԱՅ»

Թուրքիոյ հայոց պատրիարքական աթոռը դէպի վեց դարերու հասնող իր պատմութեան մէջ կ'ապրի ծանր ճգնաժամ մը: Անշուշտ, որ այդ վեց դարերու ընթացքին ալ պատահած են զանազան անցումային շրջաններ, որոնց աւարտին աթոռը յաջողած է իր անասանութիւնը պահելու: Կասկած չկայ, որ այս անգամ ալ նմանը պիտի ըլլայ եւ Պատրիարքարանը պիտի տիրանայ իր արժանաւոր գահակալին: Սակայն դէպի այդ փուլը ընթացող գործընթացի մէջ առայժմ կ'ապրինք մտահոգիչ երեւոյթներ: Մտահոգիչ՝ այն առումով, թէ կը խորտակուի աթոռին վարքն ու պատիւը: Եթէ չեստղարած ակնարկով մը դիտենք նախորդ շաբաթը, ամէն ինչ սկսաւ իսթանպուլի կուսակալութեան 5 ֆետրուար թուակիր նամակի յայտնութիւնով: Սոյն նամակը կը մերժէր պատրիարքական աթոռի թափուր ըլլալու իրողութիւնը եւ Մեսրոպ Բ. պատրիարքը կը համարէր առկայ պատրիարք: Մօտ տասը տարի է անգործունակ պատրիարքի յաջորդը ընտրելու համար կը պարտադրէր այժմու պատրիարքի վախճանումը: Իսկ գործնականապէս խորհուրդ կու տար մինչեւ այդ թուականը պատրիարքարանի ընթացիկ գործերը կատարել պետութեան կողմէ ալ ճանաչում տեսած ընդհանուր փոխանորդի, չանձին Արամ արք. Աթէշեանի հետ:

Այս նամակի յայտնութենէն անմիջապէս ետք 7 ֆետրուարին Ներքին գործոց նախարար Սիւլէյման Սոյլու իր հետ ունենալով Ոստիկան գորաց հրամանատարը եւ Ապահովութեան սնօրէնը ժողով մը գումարեց պոլսահայ համայնքի խումբ մը բարերարներու եւ համայնքային հաստատութիւններու ներկայացուցիչներու հետ, որ կտրուկ կրկնեց կուսակալութենէն եկած նամակի բովանդակութիւնը:

Այդ ժողովին միայն Կետիկ-փաշայի Սուրբ Յովհաննէս Եկեղեցւոյ թաղական խորհուրդի ատենապետ Յարութիւն Շանլը եւ պատրիարքական ընտրութեան Կարգադիր յանձնախումբի բանբեր իրաւաբան Սեպուհ Ասլանկիլ համարձակեցան առարկել նախարարի պարտադրանքին, պնդելով թէ նոր պատրիարքի ընտրութիւնը անհրաժեշտութիւն մըն է մեզի համար: Իրենց այդ ելոյթը յաջորդ օրուայ հայերէն թերթերուն մէջ քննադատութեան նիւթ դարձաւ եւ նոյնիսկ համայնքի «բանիմաց մարդ»-ու յաւակնութիւն ունեցող կարգ մը անձեր իրենց ընդվզումը յայտնեցին՝ «մեր համայնքին վնաս կը հասցնեն ինչպէս կարգ մը երեսփոխաններ, այնպէս ալ կարգ մը փաստաբաններ» ըսելով:

Այս զարգացումներէն ետք կայացաւ Կրօնական ժողովի նիստը Սահակ արք. Մաշալեանի գլխաւորութեամբ: Պետական լուծի հետեւանքով գոյացած ճգնաժամը նոր հարուած մը եւս ստացաւ Կրօնական ժողովի վերջին որոշումով, ըստ որում հնազանդութիւն կը յայտնուէր պետութեան անընդունելի ճնշումին դիմաց եւ նոյն ժողովի կողմէ ընտրուած տեղապահի կոչումը ետ կ'առնուէր ընթացք տալու համար Արամ արք. Աթէշեանի փոխանորդի կոչումին վերահաստատման: Կատարուած իրողութիւնը բառին բուն իսկ իմաստով խայտառակութիւն մըն էր Պոլսոյ պատրի-

արքական աթոռի պատմութեան մէջ:

Պէքճեան սրբազան լուաց իր ձեռքերը

Այս պայմաններու տակ տեղապահ Պէքճեան սրբազանի համար սպառած էին իր առաքելութիւնը արժանի կերպով կատարելու հնարաւորութիւնները: Արդարեւ սրբազանը Երեքշաբթի օր խումբ մը ազգայիններու ընկերակցութեամբ հրաժեշտ առաւ պատրիարքարանէն ու մեկնեցաւ դէպի Իսթանպուլի օդակայանը, վերադառնալու համար իր նախապէս պաշտօնավարած քաղաքը: Այստեղ ցնցիչ է նաեւ այն իրողութիւնը, թէ Պէքճեան սրբազան ստանձնելով Պոլսոյ մէջ իրեն վստահուած ծառայութիւնը հրաժարած էր իր նախկին պաշտօնէն՝ Գերմանիոյ հայոց հոգեւոր առաջնորդի պաշտօնը փոխանցելով իր յաջորդին:

Բիւզանդական խառնարանը անգամ մը եւս եռացած էր իր հին աւանդութիւններով եւ ի սպառահանած էր բարի նպատակներով սկսած գործը: Խնդիրները այս գիտակցութիւնով դիտողներու հա-

մար ներկայ օրերը վերածուած են սուգի: Իսկ անդին կան յաղթանակի շեփոր հնչեցնող զանգուած մը: Այդ զանգուածը այժմ տարուած է իր տարած այս «յաղթանակի գինովութենէն» եւ բնականաբար իրեն իրաւունք կը պահէ ամէն տեսակ մեծխօսիկութեան համար: Այս բոլորը դիտելով անգամ մը եւս կը յիշենք հայոց այն առածը, ուր կ'ըսուի «Վա՛յ քեզ քաղաք, որ թագաւորդ մանուկ է»:

Յայտարարութիւններու տարափ

Բոլոր այս դժբախտութեան մէջ նոյնիսկ յաղթանակի շեփորներուն աղմուկին տակ իսկ տեսանելի է կատարուած իրողութեան տգեղութիւնը: Հետեւաբար այս անգամ ալ իրարայայջող կերպով կը լսենք ներկայ մղձաւանջին ձերբազատուելու համար կատարուած առաջարկները: Օրինակի համար Գարեգին Պէքճեան սրբազանի տեղապահի կոչումին վերջ տուող Կրօնական ժողովի ատենապետը այս անգամ հրապարակ կ'ելլէ ըսելով, թէ միակ լուծումը պատրիարքի ընտրութիւնն է: Մինչդեռ իր գլխաւորած ժողովն էր, որ համակերպեցաւ կուսակալութեան պարտադրանքին եւ յօժարեցաւ մինչեւ Մեսրոպ պատրիարքի վախճանումը

ընտրութիւն չընել: Վերջապէս մեր ժամանակներու պայմաններուն մէջ երկրի որդեգրած քաղաքականութիւնը ներշնչում պատճառած է մեր կարգ մը գործիչներուն, որոնք եւս յարմար կը տեսնեն իշխանութեան փողը հնչեցնել իրենց սեփական գործերը առաջ տանելու համար: Իսկապէս ալ, երբ համատարած կերպով կը խօսինք պատրիարքական ընտրութեան մը խնդրին շուրջ, պէտք չէ անտեսենք, որ միւս կողմէն ոմանց համար կայ նաեւ սեփական հաշիւներ: Մէկ կողմէն մենք միամիտներս մտահոգութիւն կը յայտնենք ազգին արժանապատուութեան համար, միւս կողմէ այդ ազգին իբրեւ թէ ազգայինները տարուած են շատ հսկայ գումարներու փոխանցումով:

Ինչ որ ըսուած էր գրութեան սկզբին, եկեղեցին վերջ ի վերջոյ պիտի յաջողի ելքի միջոց մը գտնել այս անփառունակ ընթացքին: Յիշենք գրիչի մեծ վարպետ Չեթին Ալթանի իմաստուն խրատը եւ յոյս ներշնչենք «մի՛ վհատիք ամէն ինչ լաւ կ'ըլլայ» ըսելով եւ յուսանք թէ մինչեւ այդ պահը ներկայ անընդ վնաս չպատճառէ այս հասարակութեան միասնութեան եւ պայծառութեան:

«ԱԿՕՍ»



Unity Concert

DEDICATED TO
**THE ARMENIAN GENOCIDE
THE HOLOCAUST
AND SLAVERY**

IN LOVING
MEMORY OF



CHRISTIAN SHAHAZARIAN

SUNDAY, MARCH 25, 2018
300 E. Colorado Blvd., Suite 200, Pasadena, CA 91101

Refreshments & Hors D'oeuvres
Social Hour 2:00-3:00pm • Concert 3:00-5:00pm

 ALAN CHAPMAN PIANIST	 VATCHE MANKERIAN PIANIST	 YIN YIN HUANG PIANIST	 ALLISONNE CRAWFORD VOCALIST
 KAREN BENJAMIN VOCALIST	 ARPY AINTABLIAN SOPRANO	 LING YAN CELLIST	 JONATHAN WEI VIOLINIST

FOR TICKETS & INFO CONTACT: **DONATION \$35**
Nat Nehdar: 626-437-1354 nnehdar@aol.com
Vahe Atchabahian: 626-354-5924 vamedia@yahoo.com
90-MINUTE FREE PARKING VALIDATION

ՄՏՈՐՈՒՄ

ԱՐՄԻՆԵ ԿՈՒՆԴԱԿՁԵԱՆ

Նստած եմ մեր այստեղի հայակական դպրոցներից մէկի Ամանորի հանդէսին: Սրահը կամանց կամանց լցուում է բազմութեամբ: Սրահը զարդարւած է սօնական եւ շատ գեղեցիկ: Սեղաները լեցուն են զանազան խորտիկներով ու նախաճաշի ուտեստներով: Բեմ է բարձրանում մանկամտերի եւ մանկապարտէզի տնօրինուհիին ու յայտարարում է հանդիսութիւնը բացուած: Հերթով բեմ են բարձրանում 2-5 տարեկան հրէշտակադէմ հայ փոքրիկները իրենց զանազան խմբակների գոյներով, կարմիր խումբ լետոյ կանաչ խումբ, դեղին խումբ եւ այլն:

Սկսում են խառնիխուռը մանկական ձայներով իրենց սովորած արտասանութիւնները, երգերն ու պարերը: Ամէն մի երեխայ դրսեւորում է իր իւրաքայտուկ անհատականութիւնը: Մի քանիսը շատ համարձակ ու հպարտ իրենց երգ ու պարի շնորհքն են դրսեւորում, եւ կան ամաչկոտներ որ մի քիչ վախեցած, մի քիչ էլ շուարած կամ երգում ու շարժում են, կամ էլ հայեացքով իրենց ծնողներին են փնտրում սրահի նստածներին մէջ:

Ամէն խմբակի մէջ էլ կան անգամ լացողներ կամ շատ տխուր բռնազոտիկ կանգնածներ որ պատրաստ են մամայի գիրկը ցատկել եթէ կարողանային: Կան մի քանի երեխայ որ անքան սրտածմիրկ լաց են լինում որ մայրը մեծ դժկամութեամբ բաց ստիպուած մօտենում է ու գրկած նրան վար է իջեցնում բեմից:

Ինձ թւում է որ եթէ մի երեխայ մինչեւ այդ աստիճան անհաղորդ է ու ազդուած աւելի ճիշտ է չշարունակի մասնակցութիւնը քան թէ այդ աստիճանի «թրամա» ապրի: Ես նայում եմ ցածր նստած ծնողներին որ իրենց հեռաձայները ձեռքները բռնած, ամենայն հրճուանքով լուսանկարում եմ իրենց մանուկներին:

Ուշադիր դիտում եմ շուրջս կատարւածը ու սկսում եմ մտորել հետեւեալ մտքերը:

Բեմի վրայ են հաւաքւած մի քանի հարիւր սիրուն, մատղաշ նոր ծիլ տւած ծաղիկների պէս երեխաներ: Ինքս ինձ հարց եմ տալիս, 15, 20 տարի յետոյ սրանք ու՞ր են լինելու: Արդեօ՞ք այս դպրոցը կ'աւարտեն: Աւարտելուց յետոյ արդեօ՞ք բարձրագոյն ուսումնական հաստատութիւն կը յաճախեն: Այս մեծ ու այլազան Ամերիկայի ո՞ր անկիւնը ո՞ր համալսարանը կը վիճակուի իրենց կրթութիւնը շարունակել: Որքանով կ'ապուած կը մնան իրենց ակունքներին: Արդեօ՞ք հայի հետ կ'ամուսնանան: Արդեօ՞ք իրենց ծնողների պէս հայկական դպրոց կ'յաճախեն իրենց երեխաները:

Ի՞նչ է լինելու մեր այս գաղութի ապագան: Այս նոյն հայապահպանումը որ մղել է այսքան ծնողների այստեղ հաւաքւելը ո՞րքան կը շարունակուի: Ո՞րքան ապագայ ունի եւ որքան կը յարատեւի սփիւռքը Հայրենիքից կտրուած: Բոլորս էլ գիտենք որքան մեծ գոհողութեամբ եւ դժուարութեամբ ենք փորձում հայկականութիւնը պահպանել:

Եթէ այս երեխաները Հայրենիքում լինէին, ոչ մէկ այսպիսի մտահոգութիւն չէին ունենայ

իրենց ծնողները: Յաճախ է լինում որ Երեւանում անցնում եմ դպրոցների դռների արջուկաց այն ժամերին որ արդէն դասերը աւարտուած են ու խումբ խումբ երեխաններ ուրախ ու գլարդ ցատկոտելով, դուրս են գալիս դէպի փողոց մեր ոսկեղնիկ Հայերէն լեզուով գուարճախօսելով ու կատակով իրար հրմշտելով: Կան ծնողներ որ եկել են շատ փոքր երեխան տուն տանելու, եւ կան նրանք որ շատ հեռու չեն բնակւում ու գոյնզգոյն ուսապարկերով ընկերով կամ միայնակ քայլելով տուն է գնում: Հայաստանը ապահով երկիր է ու ոչ մէկ ծնող այստեղի նման մտահոգ չէ իր երեխայի համար որ պէտք է մենակ տուն քայլի: Կան աշակերտներ որ հանրակարգերով են դպրոց յաճախում: Վերջին տարիներին համալսարանի թաղերը լեցւած են ուսանողների անձնական մեքենաներով:

Երեւակայում եմ որ եթէ այս սրահի մէջ նստածները հրաշքով տեղափոխելու լինեմ Երեւան, քանի քանի թաղամասի բնակիչ կը բազմանար ու կ'աշխուժանար: Մանաւանդ Երեւանը շատ երեխայակեղրոն քաղաք է: Համարեայ ամեն օր Տիկնիկային թատերասրահում եւ այլուր լինում են տարբեր ներկայացումներ տարբեր տարիքային խումբերի համար: Մանաւանդ արձակ օրերին կը տեսնենք խումբերով թանգարաններ, հանրային պարտէզներ կամ կենդանաբանական այգի այցելութեան "էքսկուրսիա" դուրս եկած դպրոցականներ իրենց դասղեկների կամ ուսուցիչների հետ: Խնկօ Ապեր մանկական գրադարանը ամենասիրելի վայրն է ու յաճախ աշակերտներ կը տեսնենք որ դպրոցից յետոյ անմիջապէս տուն գնալու փոխարէն մտնում են ներս ու հետեւում հեքեթ պատմող դաստիարակների այդ նպատակով կահաւորւած գեղեցիկ սրահում: Այս գրադարանում յաճախ լինում է նոր լոյս տեսած գրքերին ծանօթացնող ցուցահանդէսներ:

Ամենահետաքրքիր երկու յատուկ դպրոցական օր կայ Հայաստանում, մէկը Առաջին Զանգն է եւ միւսը Վերջին Զանգը: Առաջին գանգը Սեպտեմբեր մէկին է երբ դպրոցականները յատկապէս առաջին դասարանը առաջին անգամ յաճախող փոքրերը ծաղկեփնջերով դիմաւորում են իրենց ուսուցիչներին: Բոլորն էլ հագւած են լինում շատ սիրուն ու կոկիկ: Աղջիկների մագերէտ գարդարւած են լինում տեսակ տեսակ բանթիկներով: Հագուադէպ է լինում յուզուած, անգամ լացող փոքրիկներ կախուած մամայի փեշերից:


Մէկ րոպէ մտովին համեմատում եմ Հայաստանում իմ տեսած այսպիսի փոքրերի ապագան ԱՄՆ-ում մեծացող փոքրերի հետ ու վստահ եմ որ սրանք հայ կը մեծանան բոլոր առումներով, իսկ ցաւօք ԱՄՆ-ում մեծացողները քանի մը սերունդ յետոյ կորած են մեր ազգի համար: Ինչպէս Արամ Կաթողիկոսը ասեց իր գրոցից ընթացքին անցեալ ամառւայ Սփիւռք- Հայաստան մեծ համագումարին, «Սփիւռքը մաշուած է...»

Ճիշտ է, ոչ մէկ ազգ իր հայրենիքից դուրս ապագայ չուներ:

ՔԵԱՄԱՐԱ ԳԱԻԱՌԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆԷ

Յանձնախմբիս միջոցով հրատարակուած՝ «Քեամարա գաւառը եւ նրա հայ ազգաբնակչութիւնը» պատմութեան գրքի շնորհանդէսը տեղի է ունենալու 28 մարտի 2018 թ. չորեքշաբթի կ.յ. ժամի 6.30-ին Իրանահայ միութեան կենտրոնատեղիում բովանդակալից յայտարարով: Գրքի հրատարակումը բաւական երկար ժամանակ պահանջեց նիւթերի հաւաքագրման տարբեր աղբիւրներից եւ տեղեակ անձերի միջոցով: Հարկ համարեցինք յիշել եւ գնահատել գրքի բովանդակութեանը եւ աշխատանքներին իրենց մասնակցութիւնը եւ օժանդակութիւնը բերած հետեւեալ անձանց՝

- 1.- Ծաւարշ Ղազարեան՝ Քեամարա յանձնախմբի կեանքի կոչող, գրքի յղացող եւ տեղեկութիւններ ներկայացնող գիւղերի եւ երեւելի անձանց մասին:
- 2.-Յովիկ Ս. Մինասեան՝ մի շարք նիւթերի համագործը:
- 3.-Ռուբէն Կորիւն՝ որոշ նիւթերի խմբագրող եւ շարւածք ու համագործը:
- 4.-Հելենա Աղասարեան՝ էջադրում եւ Նինէլ Մանուկեանի հետ միասին՝ համակարգչային շարուածք:
- 5.-Նազար Ծահվերդեան՝ սրբագրիչ:
- 6.-Արթին Խուդավերդեան՝ համակարգչային, գրաֆիկական եւ շապիկի ձեւաւորող:
- 7.-Միհրդատ Մարտիրոսեան՝ Լիւբան գիւղի պատմութեան տեղեկութիւններ փոխանցող:
- 8.-Վահան Ղարիբեան՝ Սաքի գիւղի պատմութեան, բնակչութեան մասին յօդուածի հեղինակ:
- 9.-Վրէժ Հոնարչեան՝ Սաքի գիւղի պատմութեան-Հոնարչեանների մասին յօդուածի հեղինակ:
- 10.-Սայեադ Մանուկեան, Մինաս Ծամիրեան, Արամ Ծամիրեան, Խաչիկ Ծամիրեան, Հրայր Մանուկեան՝ Դաւիթբաղ (Դովթաբաղ) գիւղի պատմութեան եւ բնակչութեան մասին տեղեկութիւններ ներկայացնողներ:
- 11.-Աբրահամ Ղադիմեան՝ Մզրա գիւղի եւ բնակչութեան մասին տեղեկութիւններ ներկայացնող:



յացնող: 12.-Գաբրիէլ (Ջիբրայէլ) Ղազարեան եւ Գեղամ Ծահբազեան՝ Քանդներ գիւղի եւ բնակչութեան մասին տեղեկութիւններ ներկայացնողներ, նաեւ Գաբրիէլը ներկայացրել է՝ Ղորչիբաշի, Չարթաղ, Մզրահոսէյն, Հաջիբաբաղ, Սէյֆաբաղ, Վերի Ղալա, Դանեան եւ Դէյսֆիտ գիւղերը:

13.-Սեմիկ Ծահվերդեան, Գուրգէն Նազարեան, Համօ Սաֆարեան, Հայկ Բարխուդարեան եւ Սերոփ Ծահվերդեան՝ Լիւբան գիւղի բնակչութեան մասին տեղեկութիւններ ներկայացնողներ:

14.-Նորայր Միրզախանեան եւ Միրան Ղարիբեան՝ Դարաշուր(Ղալեշուր) գիւղի եւ բնակչութեան մասին տեղեկութիւններ ներկայացնողներ:

Գիրքը հրատարակուել է Յանձնախմբի անդամների եւ որոշ անհատ գաւառացիների նիւթական յատկացումներով: Կը յուսանք անցեալում հրատարակուած գաւառի մասին պատմութեան գրքերի շարքում իր արժանի տեղը կը գտնի իր նոր տեղեկութիւններով:

Ուրախութեամբ կ'սպասենք հետաքրքրողների մասնակցութիւնը շնորհանդէսի հանդիսութեան, ուր կատարուելու է նաեւ հիւրասիրութիւն:


Քեամարա Հայրենակցական Յանձնախումբ

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈՉՆԵՐԻ ԵՒ ԽՕՍՔԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրապոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժինը լոյս է ընծայել երջանկայիշատակ Վազգէն Ա. Պալմեան (1955-1994թթ.) Ամենայն Հայոց Կաթողիկոսի Երկերի Ժողովածուի Բ. հատորը՝ «Քարոզներ եւ խօսքեր» վերնագրով՝ նուիրուած Հայոց 130-րդ Հովուապետի ծննդեան 110-ամեակին:

Ժողովածուում տեղ են գտել Վազգէն Ա. Կաթողիկոսի՝ տարբեր եկեղեցական տօների եւ յիշարժան արարողութիւնների առիթներով խօսուած քարոզները, որոնք ի մի են բերուած ցայսօր Վեհափառ Հայրապետին նուիրուած ժողովածուներից եւ «էջմիածին» ամսագրից:

Ժողովածուն հրատարակութեան է պատրաստուել Հրատար-



րակչական բաժնի տնօրէն Արժանապատիւ Տ. Արարատ քահանայ Պողոսեանի ջանքերով:

Գիրքը տպագրուել է «Սարգիս Գաբրիէլեան» հիմնադրամի մեկենասութեամբ:

ՏՂԱՄԱՐԴԸ ԻՆՉՈՒ Կ'ԱՆՏԵՍԷ ԻՐԵՆ ՉԱՄԱՐ ՉԱՃԵԼԻ ԿԻՆԸ

Շատ տղամարդիկ համոզուած են, թէ «որքան քիչ սիրեն իրենց հաւնած կինը, այդքան շատ հաճելի պիտի ըլլան անոր համար»: Ասիկա թէեւ պատճառներէն մէկն է, բայց ոչ միակը, որ կը բացատրէ արական սեռի ներկայացուցիչներուն բաւական զարմանալի պահուածքը:

- Բաւականաչափ կատարեալ չէ: Եւ այսպէս, ինչո՞ւ տղամարդը կ'անտեսէ իրեն համար հաճելի կինը: Ասիկա կրնայ ըլլալ անկեղծութիւնը սեփական անձի հանդէպ: Տղամարդը կը հասկնայ, որ պատրաստ չէ լուրջ սիրովէ պիտի եւ կը մեծցնէ տարածութիւնը՝ զգացմունքները սառեցնելու համար: Հասկնալի է, որ ասիկա բաւական դժուար է, այդ պատճառով կինը երբեմն չի կրնար հասկնալ, թէ ինչ տեղի կ'ունենայ՝ համակրանքը իրեն հանդէպ ակնյայտ է, սակայն, ոչ մէկ զարգացում կայ:

- Այլ պատճառ մը կրնայ ըլլալ անոր այն կասկածը, որ ինք այդքան ալ լաւ չէ ձեզի համար: Ասիկա շատ լուրջ պատճառ է, որ կը ստիպէ տղամարդուն խուսափելու քեզմէ:

Անհետաքրքրական ըլլալու, մրցակցութեան չդիմանալու վախը, նիւթական անկայունութիւնը զինք կը դարձնէ զգոյշ:

- Պատրաստ չէ առաջինը ըլլալու: Այստեղ կարելի է նշել չընդունուած ըլլալու վախը: Այնպէս որ, հարցին, թէ ինչո՞ւ տղամարդը ամէն պարագայի կ'անտեսէ իր սիրած կինը, մի բացառէք, որ ան ուղղակի կը վախնայ մերժուած ըլլալէն:

Վախը կրնայ ունենալ կրաւորական հիմք: Այդպիսի տղամարդիկ կ'ուզեն, որ կինը ըլլայ առաջին քայլը առնողը:

- Ե՛լ կ'ուզէ, ե՛լ կը կասկածի:

Կասկածները նոյնպէս մեծ դեր կը խաղան: Ան կը հաւնի ձեզ, սակայն համոզուած չէ, որ իրեն համար ժամանակն է ունէ մէկուն հետ հանդիպելու: Ան կը կշռէ բոլոր «կողմերը» եւ «դէմերը», կը փորձէ լսել ինքզինք: Ասիկա կրնայ վրդովեցնել, քանի որ ոչ մէկուն համար հաճելի է այդպիսի դանդաղկոտութիւն, սակայն, պէտք է համաձայնիլ, որ այդպիսի մանրակրկիտութիւնը լաւ նշան է:

- Իր խաղը: Ի հարկէ, պատճառ մը եւս, թէ ինչու տղամարդը կ'անտեսէ իրեն համար հաճելի թուացող կինը: Որովհետեւ կը խաղայ անոր հետ: Յատուկ կ'անտեսէ, կը փորձէ հրահրել իրեն հանդէպ հետաքրքրութիւնը: Այստեղ, ի հարկէ, վերջին խօսքը աղջկանն է:

Ընդհանրապէս, ինչ ալ որ ըլլայ ձեզի հանդէպ այդպիսի վերաբերմունքին պատճառը, չի շեղէք՝ դուք ձեր վրայ մի՛ կասկածիք: Եթէ ձեզի յամառօրէն չեն նկատեր, որովհետեւ չեն հասունցած լիակատար սիրովէ պիտի համար, մի կառչիք յարաբերութիւններուն: Այո՛, ցանկալին ստանալու համար անհրաժեշտ ջանքերու եւ իրերու ընթացքը փոխելու անհմաստ փորձերու միջեւ սահմանը շատ բարակ է: Սակայն, եթէ դուք իրապէս կը հետաքրքրէք զինք, ան պիտի գտնէ ձեզ ստիկա ցոյց տալու համար: Նոյնիսկ առանց շտապելու, սակայն, որոշ քայլեր պարտադիր պիտի ընէ:

Եթէ, այնուամենայնիւ, որեւէ քայլ ձեզի ընդառաջ չէք տեսներ, մոռցէք զինք: Իսկ ամենակարեւոր ճշմարտութիւնը, որ պէտք է յիշել այն է, որ ոչ մէկ տղամարդ կը սիրէ իրեն հանդէպ չափազանց մեծ ուշադրութիւնը:

ԿԱՐՄԻՐ ԽԱՂՈՂ ԱՆՆԱԿԱՐԳ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐ

Եթէ կարմիր խաղողը ներառէք ձեր սննդակարգին մէջ, պիտի կարենաք ամրացնել առողջութիւնը: Ինչո՞ւ հարկաւոր է կարմիր խաղողը ներառել սննդակարգի մէջ:

1) Կարմիր խաղողը կ'օգնէ կանխարգիլելու բջիջներու վաղաժամ ծերացումը:

2) Բնական խաղողի հիւթը կ'օգնէ արիւնատար եւ սիրտ-անօթային համակարգի առողջ ըլլալուն:

3) Կարմիր խաղողը օգտագործելով կ'իջեցնենք արեան ճնշումը:

4) Օրուան ընթացքին 15-20 հատիկ կարմիր խաղող ուտելու պարագային կրնաք նուազեցնել մարմնի մէջ եղած նազրիումի:

ԶԱՅՐՈՅԹԸ ՅԱՂԹԱՅԱՐԵԼՈՒ ԵՐԵՔ ԱՐԴԻԻՆԱԻՏ ՄԻՋՈՑ

1) Ներել եւ մոռնալ- Ներութիւնը ընդունիլը գայլոցթի բռնկումը կանխելու գործօն միջոց է: Ներութիւնը ընդունելու եւ մարդոց ներելու ունակութիւնը խնդրալարոց իրավիճակները հարթելու իսկական մօտեցման ցուցանիշ է: Ասիկա նաեւ դաս է դիմացինին համար, որ պիտի հասկնայ, թէ դժբանք դիմակայութիւնը ոչ մէկ լաւ բանի կը յանգեցնէ: Ներութիւնը ընդունիլը անոր հնարաւորութիւն պիտի տայ մտածե-

մակարդակը:

5) Կարմիր խաղողը առաւօտեան ուտելու պարագային՝ անիկա կը դառնայ լուծողական լաւագոյն միջոցներէն մէկը:

6) Կարմիր խաղողին մէջ եղած նիւթերը կրնան դանդաղեցնել ալգո-հայմըրի հիւանդութեան զարգացումը:

7) Անիկա կը նպաստէ յիշողութեան ամրացման: Փորձագէտները կը պնդեն, որ կարմիր խաղողէն պատրաստուած գինին զգալիօրէն կը լաւացնէ ուղեղին աշխատանքը:

8) Անիկա նաեւ կրնայ կանխարգիլել քաղցկեղի առաջացումը: Կարմիր խաղողը կը պարունակէ այնպիսի նիւթեր, որոնք կը դանդաղեցնեն բջիջներու վնասումը:

լու բացասական հետեւանքներու յանգեցուցած իր արարքին, պահուածքին մասին:

2) Լսելու ունակութիւն- Ձրուցակիցին, որոշ պարագաներու՝ ընդդիմախօսին կամ գայլոցթի առիթ դարձած մարդուն լսելու ունակութիւնը թոյլ պիտի տայ հասնելու անոր համակրանքին: Լսելու ժամանակ եւս կարեւոր գործօն է վստահութիւնը, որ վերջնականապէս պիտի հարթէ խնդրալարոց իրավիճակը:

ԳՐԿԱԽԱՌՆՈՒԹԵԱՆ ՕԳՏԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Գրկախառնութիւնը մօտիկ մարդու հանդէպ սիրոյ դրսեւորումներէն մէկն է: Գրկելով՝ մենք կը փորձենք փոխանցել որքան հնարաւոր է շատ դրական զգացմունքներ, որ ոչ միայն հաճելի է, այլ՝ օգտակար:

Կարելի է յիշել գրկախառնութեան քանի մը օգտակար ազդեցութիւն.

- Գրկախառնութիւնը դրական կ'ազդէ նեարդային համակարգին վրայ, այդ պատճառով՝ ամէն օր գրկախառնութիւնով դուք պիտի խուսափիք ճնշուածութենէ եւ հեռու պիտի մնաք ընկճախտէն:

- Գրկախառնութիւնը կը կանոնակարգէ զարկերակը եւ ճնշումը:

- Երբեմն խօսքերը բաւարար չեն մարդուն ցոյց տալու զգաց-

մունքներուն ամբողջ ներկայանալը, այդ պատճառով՝ գրկեցէք սիրած մարդոց՝ այդպէս անոնք իրենց միայնակ չեն զգար:

- Որքան զարմանալի է, սակայն գրկախառնութիւնները կը դանդաղեցնեն ծերացման գործընթացը եւ կ'ամրացնեն դիմադրողականութեան համակարգը:

- Գրկախառնութիւնները կ'օգնեն յաղթահարելու ճգնաժամային իրավիճակները:

- Անհաւանական է, սակայն, գրկախառնութիւնները կը նուազեցնեն ախորժակը, ինչ որ նպաստաւոր է ձեր կառուցուածքին համար:

Եւ վերջապէս, գրկախառնութիւնները մեզ ուղղակի աւելի երջանիկ կը դարձնեն:

ԻՆՉՊԻՍԻ՞ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԷ ՊԵՏՔ Է ԱԶԱՏԻԼ՝ ԼԱՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԶԳԵԼՈՒ ՉԱՄԱՐ

Մեզմէ իւրաքանչիւրը՝ այլ մարդոց հետ ծանօթութեան ժամանակ, կը փորձէ լաւ տպաւորութիւն ձգել: Սակայն, երբեմն մենք չենք նկատեր, որ կը խօսինք միայն մեր մասին կամ անընդհատ կը ստուգենք հեռախօսը: Պէտք է յիշել, որ այդպիսի պահուածքը կը վանէ մարդոց:

Այդ պատճառով, լաւ պիտի ըլլայ ծանօթանալ հետեւեալ սովորութիւններուն, որոնցմէ կ'արժէ ազատիլ, եթէ դուք իսկապէս կ'ուզէք լաւ տպաւորութիւն գործել ուրիշներու վրայ:

1) Խօսակցութեան ժամանակ դուք կը ստուգէք հեռախօսը: Վիճակագրութիւնը կը վկայէ, որ մենք հեռախօսը կը ստուգենք միջին հաշուով օրը 46 անգամ: Յիշեցէք, որ իւրաքանչիւր մարդ արժանի է ձեր ուշադրութեան: Ի հարկէ կրնան ըլլալ բացառութիւններ: Այդ պատճառով, եթէ դուք կը մտածէք, որ հեռաձայնը կարեւոր է, լաւ պիտի ըլլայ մէկ կողմ քաշուիլ ու պատասխանել: Ծիծղէ չէ պատասխանել հեռաձայնին կամ հաղորդագրութիւններուն, երբ անմիջականօրէն կը խօսիք մարդու հետ:

2) Դուք ընդհատելու սովորութիւն ունիք եւ չէք հետաքրքրուիլ այլ մարդոցմով: Շատ յաճախ, զրուցակիցի վրայ տպաւորութիւն ձգելու համար մենք կը սկսինք խօսիլ միայն մեր մասին: Սակայն, ատկէ պէտք է խուսափիլ: Եթէ, այնուամենայնիւ, դուք նկատած էք, որ շատ էք խօսակցութեան մէջ, դադար տուէք: Ուշադրութիւն դարձուցէք, թէ ինչ կ'ըսեն ուրիշները եւ անոնց արտայայտուելու հնարաւորութիւն տուէք:

3) Դուք չէք նայիլ մարդոց աչքերուն: Շատ կարեւոր է հանդիպման ժամանակ կամ ունէ մէկուն դիմելու ընթացքին, տեսողական կապ հաստատել: Ասիկա ցոյց կու տայ ձեր հետաքրքրութեան թիւնը: Սակայն, այստեղ ալ պէտք է չափը գիտնալ: Երբեմն անդադար տեսողական

կապը կրնայ ստիպել դիմացինին անհանգստանալ կամ անյարմար զգալ:

4) Ուշադրութիւն դարձուցէք, թէ ինչպէս կը վարէք նամակագրութիւնը: Յիշեցէք թուային բարոյագիտութեան գոյութեան մասին: Օրինակ, եթէ ունէ մէկը ձեզի կարճ հաղորդագրութիւն կ'ուղարկէ ամբողջութեամբ մեծ տառերով, ասիկա կ'ընկալուի իբրեւ ձայնի բարձրացում: Այդ պատճառով, ճիշդ կառուցեցէք նախադասութիւնը, մի՛ օգտագործէք կարճ պատասխաններ, եթէ չէք ուզեր, որ ձեր մասին վատ մտածեն:

5) Դուք ուշադրութիւն չէք դարձնել մարմնի լեզուին: Ապացուցուած է, որ մարմնի լեզուն է, այլ ոչ թէ դէմքի արտայայտութիւնը, որ կ'ըսէ աւելին քան կը մտածէ եւ կը զգայ մարդը: Մտածեցէք, թէ ինչ կ'ըսէ ձեր մարմինը ուրիշներուն: Ի՞նչ հեռաւորութեան վրայ կը գտնուիք գրուցակիցին: Հնարաւոր է դուք խաչած էք ձեռքերը կամ հակառակը՝ շատ կը դպչիք անոր: Այդ պատճառով, մի՛ մոռնաք ուշադրութիւն դարձնել ձեր եւ ձեզ շրջապատող մարդոց պահուածքին:

6) Դուք կը մոռնաք անունները: Կը յիշէ՞ք այլ մարդոց անունները: Իսկ գիտէ՞ք արդեօք, թէ ինչով կ'արտայայտուի ձեր հետաքրքրութեան թիւնը մարդու մէջ: Հակառակ պարագային, դուք կրնաք ամէն ինչ փճացնել: Այնպէս որ, եթէ դուք կ'ուզէք քաղցր ունենալ որեւէ գործի մէջ, աւելի լաւ է, որ յիշէք անունները:

7) Դուք կը դասակարգէք մարդոց: Յիշեցէք հասարակ կանոնը. «Եթէ ունէ մէկը ձեզի հետ լաւ կը վերաբերի, սա կայն ան - յարգալից է մատուցողին հանդէպ, ան արդէն իսկ լաւ մարդ է»:

8) Դուք կը սիրէք ցոյց տալ ձեր նկարները: Հաւատացէք, ոչ մէկուն համար հետաքրքրական է, թէ ինչ տեսք ունիք դուք լուսանկարի վրայ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ուած միջոցը խոր շնչէն է: Կարելի է նաեւ այս վարժութեան ժամանակ փակել աչքերը եւ հաճելի ու ցանկալի որեւէ բանի մասին մտածել:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ԲԱՐՔԵՐԸ

Դեկտեմբեր 2017- ի տուեալներով՝ աշխարհի վճարած մարդ կը գործածէ համացանցը:

Մ ի ջ ի ն հաշուով՝ անհատ մը շաբթուան 13 ժամը գոնէ համացանցի վրայ կ'անցնէ:



Համացանցը որքան ալ իր բազմատեսակ առաւելութիւնները եւ բարիքները ունենայ եւ որքան ալ արդիականութեան ամբարը ըլլայ, անոր գործածութիւնը ունի նաեւ բազմաթիւ վատ հետեւանքներ եւ ազդեցութիւններ եւ այս կրնայ մեծին ու փոքրին վերաբերիլ: Այսօր հեռախօսային ցանցերը երկու-երեք տարեկան երեխաներու ձեռքը կը տեսնենք եւ երբեք չի գարմանանք, անոնք շատ անգամ գիտեն գործածելու ձեւը:

«Ինթըրնէթ»-ի կամ համացանցի գործածութեան վատ հետեւանքները եւ վնասները շատ են.-

- Փոխ հաղորդակցութեան պակաս.
- Մարդիկ այսօր առանձին աւելի ժամանակ կ'անցնեն եւ կը նախնորեն անցնել եւ փոխանակ դէմ յանդիման հաղորդակցելու, առանց իրար տեսնելու եւ համացանցով կը նախնորեն խօսիլ, վիճիլ, եւայլն:

Այս երեւոյթը, այո, կրնայ ժամանակ խնայել, սակայն իր վատ հետեւանքներն ալ ունի:

- Մտածելու կարողութեան նուազում եւ ստեղծագործելու բացակայութիւն.
- Ծուլութիւն եւ ընդօրինակութիւն .

Երբ բոլոր հարցերու պատասխանները արդէն իսկ համացանցի վրայ ունինք, ճիգ չենք թափեր մեր ինքնուրոյն մտքերը փոխանցելու եւ կամ գրութիւն մը ներկայացնելու ...:

Այս երեւոյթը շատ դիւրաւ կ'ընդհանրանայ եւ կ'աճի, յատկապէս աշակերտներու մօտ :

- Մոլեռանդութիւն եւ ժամանակի վատնում.- երբ վարժութիւն եւ քէշ սովորութիւն կը դառնայ համացանցի առջեւ երկար ժամեր նստիլը, մեր սուղ ժամանակը կը վատնենք եւ մեր առողջութեան վնաս կը հասցնենք. կը խանգարուի յատկապէս մեր քունը:

- Գիրութիւն.- շարժումի պակասի պատճառով
- Աչքերու չորութիւն եւ ականջներու տկարութիւն
- ճաշի ժուճերու խանգարում
- ձեռքերու յոգնութիւն - «Գարբալ թաննըլ»
- Գլխացաւ
- Մէջքի ցաւ
- Ընկճուածութիւն եւ յուսալքում

Եւայլն... Այս բոլորը նշելով ըսել չենք ուզեր որ պէտք է դադրիլ համացանցը գործածելէ, բայց հարկ է՝ ըստ պահանջի եւ մարզի, իմաստութեամբ դասաւորել համացանցի գործածութեան ժամերը եւ ձեւը:

Այսօր մեծ իրականութիւն է որ համացանցը հիանալի եւ ուժեղ գործիք մըն է, որուն միջոցաւ բազմաթիւ ծրագրեր կրնանք իրագործել եւ գործեր վերջացնել, սակայն չափաւորութիւնն ալ շատ կենսական է:

Համացանցը ճիշտ եւ ուշադրութեամբ գործածելը իր մեծ դրականութիւնը կրնայ ունենալ եւ հեռու կը պահէ բազմաթիւ վնասներէ եւ խնդիրներէ:

Շատեր համացանցը կոչած են՝ այս դարի «երկսայրի սուր»ը ...
ԼԵՆԱ Մ.

ՅԱԲԱՅԱԿԱՆ

Լիբանանի շրջանի Հ.Մ.Մ.ի ֆոլիոթի առաջին խումբի երկարամեայ ֆոլիոթիստ ՄԱՐՏԻԿ ՇԽՐՏՄԵԱՆ իր մահանացուն կնքեց Ֆրանսայի մէջ, Շաբաթ 17 Փետրուար 2018ին յետ կարճատեւ հիւանդութեան:



Մարտիկ Շխրտմեան եղած է մաքուր ու պարկեշտ ֆոլիոթիստ եւ իր լաւագոյն ներդրումը ունեցած է Հ.Մ.Մ.ի ֆոլիոթի զարգացման համար: Մարտիկի մահով Հ.Մ.Մ.ի մեծ ընտանիքը կը կորսնցնէ հաւատարիմ ընկեր մը:

Լոս Անճելոսի Հ.Մ.Մ.ի վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի տիկնոջ եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

ՅԱԲԱՅԱԿԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՊՈՅԱՄԵԱՆԻ մահուան առթիւ Պէյլանի Հայրանակցական Միութիւնն իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն:

Առ այդ \$260 տոլար կը նուիրէ Հալէպի Կիլիկեան Վարժարանին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԱՐՄԵՆԱԿ ՊՈՅԱՄԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյամեաններ իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն Ս.Գ.Հ.Կ. Սապահ Գիւլ մասնաճիւղի վարչութեան եւ բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց սուգին այցելութեամբ, ծաղկեպսակներով կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ:

Այս առթիւ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյամեան \$500 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

ԱՊԱՔԻՆՈՒՄ

ՏՕՔԹ. ՄԻՍԱԲ ԷՔՄԷՔՃԵԱՆ երկար առեւէ կը տառապի անողոք հիւանդութեամբ մը: Ներկայիս կը դարմանուի City of Hope հիւանդանոցին մէջ: Շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք սիրելի ընկերոջ:

«Մասիս»

ԹՈՒՐՔԻՈՅ ՍԷՋ ՎԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՍՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԹԱՆԳԱՐԱՆ ՊԻՏԻ ԲԱՑՈՒԻ

10 Ապրիլ 2018-ին, վան քաղաքին մէջ պիտի բացուի թանգարան մը, ուր պիտի ներկայացուին վանի թագաւորութեան (Ուրարտու) պատմութեան նուիրուած գտածոներ եւ բացառիկ նմուշներ:




Վանի նահանգապետ եւ համանուն քաղաքի քաղաքապետի պաշտօնակատար Մուրաթ Զորլուօղլու յայտնած է, որ սոյն թանգարանին բացումը վաղուց նախատեսուած էր, սակայն որոշ հարցերու պատճառով կը յետաձգուէր:

Թանգարանին շինարարութիւնը, որ տակաւին կը շարունակուի, ֆինանսաւորուած է Թուրքիոյ մշակոյթի նախարարութեան կողմէ (10 միլիոն թրքական լիրա, որ համարժէք է մօտաւորապէս 263.622 տոլարին):

Բացման արարողութեան պիտի հրաւիրուի Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարար Նուստի Գուրթուլմուշ: Թանգարանին համար երկար ժամանակ նմուշներ հաւաքագրուած են շրջակայ տարածքներէն: 2013-ի դրութեամբ, նմուշներուն թիւը կը հասնէր 87 հազարի:

Կ'ակնկալուի, որ այս թանգարանը հանդիսանայ Թուրքիոյ ամենամեծ թանգարաններէն մէկը՝ 54,000 մեթր տարածքով:



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name:-----
Address:-----
City:----- State:----- Zip Code:-----
Country:-----
Tel:----- Email:-----

ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ՅԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ



Շարունակուած էջ 1-էն

ղովրդապետ՝ Հայր Բարսեղ վարդապետ Պաղտասարեան, որ իր քարոզով աշակերտներու հետ գրուցելով, անգամ մը եւս ակարայրի ճակատամարտի մանրամասնութիւններուն անդրադարձաւ, յորդորելով աշակերտները հետեւիլ վարդանի եւ իր ընկերներուն քրիստոնէական ամուր հաւատքին, միշտ հպարտ զգալով իրենց կրօնքով ու հաւատքով. Պատարագը շարունակուեցաւ աշակերտները հաղորդուեցան վարդանաց քաջերու հաւատքով եւ սրահին բաժնուեցան Նորահարաշ շարականի երգեցողութեամբ: Պատարագին սպասարկեցին Եօթերորդ դասարանի աշակերտները, ծառայելով Սուրբ Սեղանին նաեւ ընթերցուածներ եւ խնդրանքներ կարդալով, իսկ ութերորդ դասարանի աշակերտները կ'առաջնորդէին պատարագի ընթացքը:

Պատարագին յաջորդեց պաշտօնական հանդիսութիւն: Ժամանակէն առաջ արդէն խոսուեցան բազմութիւն մը լեցուցած էր սրահը աշակերտները ուշադրութեամբ կը սպասէին իրենց հերթին ներկայացնելու համար իրենց պատրաստած ոտանաւորները, շարականները, երգերը եւ թատերգութիւնը: Օրուան հանդիսավարն էր ուսուցչուհի Մարո Գուլումեան. Հանդիսութիւնը ընթացք առաւ յոտնկայս «Նորահրաշ» շարականի երգեցողութեամբ, որուն դաշնամուրով կ'ընկերակցէր վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի Վարդուհի Պաղտասարեան. Բացման խօսքով հանդէս եկաւ վարժարանիս Տնօրէնուհի՝ Առաքինազարդ Քոյր Լուսիա, որ վարդանանց քաջերը օրինակ բերաւ՝ պահպանելու մեր քրիստոնէական կրօնքը եւ ապրելու քրիստոնէական կեանքով. Ապա յաջորդաբար բեմ բարձրացան վարժարանիս բոլոր աշակերտները սկսեալ մանկապարտէզէն մինչեւ ութերորդ կարգ, որմէ ետք Մարո Գուլումեան բացատրեց օրուան խորհուրդը եւ ներկայացուց այդ ժամանակաշրջանի պատմական հոլովոյթներն ու Հայաստանի քաղաքական իրավիճակը ապա տեղի ունեցած վարդանանց պատերազմը. ներկայացումը յաջորդեց խօսքին՝ երրորդ դասարանի աշակերտները ներկայացուցին ակնհայտ զարձած վարդանանց ճակատամարտը:

Թատրոնը սկսաւ Պարսկաստանի մայրաքաղաք Տիգրանէն, ուր Յազկերտ բ. Կ'որոշէր հայ ժողովուրդի կեանքի ընթացքը, ապա՝ ներկայացուեցաւ Հայաստանի մայրաքաղաք Աշտիշատը, ուր նախարարները վարդան Մամիկոնեանի գլխավորութեամբ մերժեցին Յազկերտի որոշումը եւ սուրին իրենց պատգամը՝ «Վասն կրօնի, Վասն հայրենեաց» որ դարեր շարունակ «հոգիներուն մէջ կ'երթայ յառաջ, հոգիներէն դուրս ցցած սուր ու խաչ» ձեւաւորեց հայ ժողովուրդի կամքը: Դարերու խորքէն եկող բաց միշտ այժմէական իր խորքով ու նիւթով՝ հարազատօրէն ներկայա-

ՆՈԹԵՐ ՊԱՍԵՐՈՒ ՅԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Շարունակուած էջ 13-էն


թիւնները: Միաժամանակ ինքզինքնին համարած են եւրոպացիներ...: Նշենք նաեւ պասք-հայերէն ծաւալուն բառարան մը գոյութիւն ունի աւելի քան 10,000 բառերով եւ նախադասութիւններով: Կարելի է նաեւ զայն որոնել ու գտնել համացանցի վրայ ալ, միջազգային լեզուներու շարքին մէջ: Կ'արժէ այստեղ յիշատակել որ պասքերու հայկական ծագում ունեցող վարկածին մասին ոչ հայեր եւս իրենց հետազօտութիւնները կատարած են այս յոյժ հետաքրքրա-

կան գործին համար: Անոնց շարքին կը պատկանին Ժողէֆ Քարսթ, Գասպար Էսօլանօ, Էտուարտ Սքէնպըր Տաճարն եւ ուրիշներ: Կը յուսանք որ պասք-հայկական լեզուական ծագումնաբանութեան հարցով յետագայ ուսումնասիրողներն ու հետազօտողները պիտի կարենան նոր լոյս սփռել ու օգտաշատ ներդրում ունենալ հայ եւ միջազգային լեզուագիտութեան պատմութեան մէջ: Այս առնչութեամբ գնահատելի ներդրում մըն է Վահան Սեթեանի յիշեալ աշխատասիրութիւնը: Գ. Մ.

ցուցին երրորդ դասարանի փոքրերը. գեղեցիկ էր տեսնել վարդանի՝ Կարէն Սամուէլեանին ըմբոստ հոգին ու վճռակամութիւնը կուռելու ընդէմ պարսիկին, եւ նաեւ հետաքրքրական էր Քրիստափոր Թէրզեանի՝ որ կը մարմնաւորէր Յազկերտ Բ.ը, բարկութիւնն ու վրդովմունքը ի տես հայերու ըմբոստացումին: Իսկ «Փափկասուն տիկնայք»ը՝ կը ներկայացնէին երրորդ դասարանի աղջիկները. Թամար Զաքօ, հերոս հայուհին մարմնացուց վարդանի դուստրը, մնացեալ աղջիկները, իրենց պատմելու շնորհքով ամբողջացուցին թատերական պատկերները՝ տալով պատմական մանրամասնութիւններ, իսկ աւարտին երբ ճակատամարտը վերջ գտած էր հերոսներու նահատակութեամբ՝ ճակատամարտի դաշտին մէջ վարդանի մայրը՝

Հուրի Պետրոսեան կը որոնէր իր գաւազը եւ հայ կնոջ վեհանձնութեամբ կ'ըսէր «ես կը տեսնեմ մեր քաջարի նահատակներուն դիակներուն ընդմէջէն փառքը հայ ժողովուրդին, եւ լինելութեան պատկը փառապանծ...» մինչ կը հնչէր Քրիստինա Ակուլեանի մեղմիկ եւ քնքուշ ձայնը մեկնաբանելով «Լուեց Ամպերը»ը ամբողջացնելով օրուան խորհուրդը: Պատգամը լաւագոյնս փոխանցուած էր, հանդիսատեսը բաւարարուած էր եւ իր խանդավառութիւնը դրսևորեց նուիրատուութիւններ ու ծաղիկփունջեր նուիրելով: Ուսուցիչները գոհունակ էին ի տես իրենց աշակերտներու յաջող նրկայացումներուն եւ ցատկապէս վատահին, որ ազատութեան եւ ազատ ինքնորոշման գիտակցութեան սերմերը պարարտ հողի մէջ կը սուզուէին:

HARRY THE HANDYMAN SERVICES
Air Conditioning Repair
Plumbing & Roofing
Water & Gas Pipes • Fencing & Painting
Iron Work Repair • Electrical Job
Email: haroutig007@gmail.com
Dependable • Reliable • Fast Work
CALL HARRY
818-219-3314

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէն հեռ.աձայնել՝
(626) 398-0506

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՄԱՐԶԱԿԱՆ

Եւրոպայի Լիգա. Զենիթի Մխիթարեանը՝ Զանդիպան Լաւագոյն Ֆուտպոլիստ

Լոնդոնի «Արսենալը» կիսապաշտպան Զենիթի Մխիթարեանն անգլիական ակումբի պաշտօնական կայքում անցկացուած քուէարկութեան արդիւնքում ճանաչուել է շուեղական «էստերսուների» դէմ Եւրոպայի լիգայի 1/16 եզրափակիչի առաջին խաղի լաւագոյն ֆուտպոլիստ:



Հայաստանի հաւաքականի աւագը ստացել է ձայների 63 տոկոսը եւ առաջ անցել այդ խաղում կողմ հեղինակ դարձած գերմանացի կիսապաշտպան Մենուիթ Օզիլից (22 տոկոս) ու սպանացի պաշտպան Նաչո Մոնրեալից (15 տոկոս):

Յիշեցնենք, որ Շուեղիայում կայացած խաղում «Արսենալը» յաղթել էր 3:0 հաշուով, իսկ Մխիթարեանը մեկնարկային կազմում հանդէս էր եկել 84 րոպէս եւ դարձել 2 կողային փոխանցման հեղինակ: Պատասխան հանդիպումը տեղի կ'ունենա Փետրուարի 22-ին Լոնտոնում:

Ռոնալդուն Կրկնել է Ռաուլի Ռեկորդը «Ռեալում»

Մ ա դ ր ի դ ի «Ռեալը» պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն, կողմ հեղինակ դառնալով «Բետիսի» դէմ Պրիմերայի 24-րդ տուրի խաղում, սահմանել է հերթական ռեկորդը:



33-ամեայ Ռոնալդուն «Ռեալը» կազմում անցկացրեց 264-րդ կողային խաղը, որում խփում է նուազագոյնը մէկ կողմ: Այդ ցուցանիշով պորտուգալացի հաւասարուեց սպանացի լեգենդար յարձակուող Ռաուլին, որը մինչեւ այս ռեկորդակիր էր «Ռեալը» կազմում անցկացրած կողային խաղերով, յայտնում է Marca-ն:

Ռոնալդուն 2009-ից է հանդէս գալիս Արքայական ակումբում, որի կազմում անցկացրել է 423 հանդիպում եւ խփել 431 կող: Ռաուլը «Ռեալում» հանդէս է եկել 1994-2010-ը՝ 738 խաղում դառնալով 322 էրկի հեղինակ:

«Բարսելոնան» Կրկնեց իր Անպարտելի Շարքի Ռեկորդը Պրիմերայում

Սպանիայի առաջնութեան 24-րդ տուրի արտագնա խաղում «էլբարին» 2:0 հաշուով յաղթելու շնորհիւ «Բարսելոնան» կրկնեց Պրիմերայում անպարտելի անընդմեջ հանդիպումների շարքը Պրիմերայում՝ 31 խաղ: Կատալոնական ակումբն այսպիսի նվաճում ունեցել էր նաեւ 2010-2011 թուականներին՝ Խոսեպ Գուարդիոլայի գլխավորութեամբ:

Սպանիայի առաջնութիւնների ռեկորդը պատկանում է «Ռեալ Սոսիեդադին»: 1979-1980 թուականներին այս թիմը չի պարտուել 39 խաղում անընդմեջ:

Անգլիայի Գաւաթ. «Մանչեսթեր Յունայթեդը» Դուրս Եկաւ Յաջորդ Փուլ

Անգլիայի գաւաթի խաղարկութեան 1/8 եզրափակիչում «Մանչեսթեր Յունայթեդն» արտագնայ հանդիպում անցկացրեց «Հադերսֆիլդ թաունի» հետ: Պորտուգալացի Ժոզէ Մոուրինիոյի գլխավորած թիմն առաւելութեան հասաւ 2:0 հաշուով: Դուբլի հեղինակ դարձաւ բելգիացի Ռոմելու Լուկակուն:

ԱԱ-2018. 15 Ֆուտպոլիստներ, Որոնց Տեղը Երաշխաւորուած է Պրագիլիայի Հաւաքականում

Ֆուտպոլի Պրագիլիայի ազգային հաւաքականի գլխավոր մարզիչ Տիտեկ Նշել է 15 խաղացողների, որոնք երաշխաւորուած տեղ կ'ունենան աշխարհի առաջնութիւնում: Յայտացուցակում կարող է ընդգրկուել 23 ֆուտբոլիստ:

«Իրենց ակումբներում մշտական խաղային պրակտիկա ունեցող եւ պարբերաբար հավաքականում հանդէս եկող խաղացողներից աշխարհի առաջնութեան կը մեկնեն Ալիսոնը («Ռոմա»), Դանի Ալվեսը, Տիագո Սիլվան, Մարկինյոսն ու Նեյմարը (բոլորը ՊՍԺ-ից են), Միրանդան («Ինտեր»), Մարսելոն ու Կազեմիրոն (երկուսն էլ «Ռեալից» են), Ռենատո Աուգուստոն («Բեյցգլին Գոան»), Պաուլինյոն ու Կոուտինյոն (երկուսն էլ «Բարսելոնայից» են), Գաբրիէլ Ժեզուսն ու Ֆերնանդինյոն (երկուսն էլ «Մանչեսթեր Սիթիից» են), Վիլիանը («Չէլսի») եւ Ռոբերտո Ֆիլմինոն («Լիվերպոլ»)»,- Տիտեկ խօսքը մեջբերում է AS-ը:

Աշխարհի առաջնութեան եզրափակիչ մրցաշարի խմբային փուլում Պրագիլիայի հաւաքականի մրցակիցները կը լինեն Շուեյցարիան, Կոստա Ռիկան եւ Սերպիան:

Ֆեդերըր Դարձաւ Պատմութեան Ամենատարեց Առաջին Ռակետը

5.5 տարուայ ընդմիջումից յետոյ Ռոջեր Ֆեդերըրը դարձեալ գլխավորեց թենիսի համաշխարհային դասակարգումը:

Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիան (ATP) Փետրուարի 19-ին հրապարակել է վարկանիշային թարմացված աղիւսակը:

Ռոտերդամում նախօրէին աւարտուած ATP շարքի մրցաշարի յաղթողի տիտղոսը նուաճելուց յետոյ 36-ամեայ Ֆեդերըրը շրջանցել է սպանացի Ռաֆայէլ Նադալին եւ դարձաւ պատմութեան ամենատարեց առաջին ռակետը: Նա գերազանցեց ամերիկահայ Անդրէ Ագասիի ռեկորդը (33 տարեկան, 133 օրական):



Ռոջեր Ֆեդերըրը ATP-ի դասակարգումն առաջին անգամ գլխավորել է 2004 թվականի փետրվարի 2-ին: Նախորդ անգամ նա առաջին ռակետ եղել էր 5.5 տարի առաջ՝ 2012 թուականի Հոկտեմբերի 4-ին: Մինչեւ այս ոչ մի թենիսիստի չէր յաջողուել ATP-ն դարձեալ գլխավորել այդպիսի մեծ ընդմիջումից յետոյ: Անդրէ Ագասիին դա անել յաջողուել էր 3 տարի 142 օր անց:

Շուեյցարացի թենիսիստը նաեւ կը թարմացնի ATP-ի վարկանիշային աղիւսակի առաջին տեղում գտնուելու սեփական ռեկորդը՝ այն հասցնելով նուազագոյնը 304 շաբաթ: Ֆեդերըրն առաջին տեղում կը մնայ նուազագոյնը մինչեւ Ինդիան Ուելսի մրցաշարը:

ATP, վարկանիշային աղիւսակ	
1 (2). Ռոջեր Ֆեդերըր (Շուեյցարիա)	- 10105 միաւոր
2 (1). Ռաֆայէլ Նադալ (Սպանիա)	- 9760
3 (3). Մարին Զիլիչ (Խորվաթիա)	- 4960
4 (5). Գրիգոր Դիմիտրով (Պուլկարիա)	- 4635
5 (4). Ալեքսանդր Զվերեւ (Գերմանիա)	- 4450
6 (6). Դոմինիկ Տիմ (Աւստրիա)	- 4220
7 (7). Դավիդ Գոֆեն (Բելգիա)	- 3280
8 (8). Ջեկ Սոկ (ԱՄՆ)	- 2880
9 (11). Կեւին Անդերսոն (ՀԱՀ)	- 2825
10 (9). Խուան Մարտին դել Պոտրո (Արգենտինա)	- 2815
47 (48). Կարեն Խաչանով (Ռուսաստան)	- 1030

Լեւոն Աղասյանը՝ Պալքանեան Երկրների Ախոյեան

Հայաստանի աթլետները երկու մետալ նուաճեցին Ստամբուլում կայացած աթլետիկայի Բալկանեան երկրների մեծահասակների ձմեռային 23-րդ առաջնութիւնում, որտեղ մասնակցեցին 17 երկրների 241 մարզիչ-մարզուհի:



Մերոնցից գերազանց հանդէս եկաւ 23-ամեայ Լեւոն Աղասեանը, որը եռացատկի մրցումներում ցոյց տուած 16 մ 35 սմ արդիւնքով գրաւեց առաջին տեղը: Նա արդէն 4-րդ անգամ ոսկէ մետալ նուաճեց Բալկանեան երկրների առաջնութիւններում:

Տղամարդկանց 1500 մ վազքում պրոնգէ մետալ նուաճեց գլմրեցի Երուանդ Մկրտչեանը: Նա ընդամէնը մի քանի հարիւրերորդական վայրկեանով ետ մնաց առաջին երկու տեղերը գրաւած կիպրոսցի եւ թուրք աթլետներից:

Թիմային հաշուարկով Հայաստանի տղամարդկանց հաւաքականը գրաւեցրեց 7-րդ տեղը, իսկ կանայք դուրս մնացին մեդալային հաշուարկից: Ընդհանուր հաշուարկով Հայաստանը 17 երկրների մէջ գրաւեց 10-րդ տեղը:

ՖԻՖԱ-ի Նախագահը Ստահոգուած է Ֆուտպոլով Գումարներ Լուանալու Համար

Ֆուտպոլի միջազգային ֆեդերացիայի նախագահ Ջանի Ինֆանտինոն մտահոգուած է ժամանակից ֆուտպոլում գոյութիւն ունեցող խնդիրներով:

«Ներկայումս տրանսֆերային գործարքների ընդհանուր շրջանառութիւնը կազմում է 6,4 մլրդ տոլար: Դա երկու անգամ շատ է, քան 4 տարի առաջ: Կարելի է ենթադրել, որ այդ համակարգը վատ չի աշխատում, գումարներ կան: Սակայն նման միտումը մտահոգութեան տեղիք է տալիս:

Գնալով աւելանում են գործակալներին եւ միջնորդներին վճարուող գումարները: Այժմ այն կազմում է մօտ 500 մլն տոլար: Իւրաքանչիւրը կարող է անել այն, ինչ ուզում է, բայց իրականութիւնը ցոյց է տալիս, որ կա խաղախաղութեան, կաշառքի, փողեր լուանալու վտանգ: Դա ցոյց են տալիս նաեւ պետական «մարմինների հետազօտութիւնները», - Sky Sports կայքով յայտարարել է ՖԻՖԱ-ի նախագահ: